4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 146(5229)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

# Չախողվել է Սիրիային հարվածելու Արեւմուտքի ծրագիրը

*Նախագահ Օբաման հարցը ներկայացնում է Կոնգրեսի քննարկմանը, որ ձերբազատվի հարվածելու պարտավորությունից*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Վերջին երկու շաբաթներին միջազգային հանրության օրակարգում Սիրիայի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու հարցն էր: Մինչ արեւմտյան երկրները պատրաստվում էին այդ գործողություններին, ԱՄՆ-ի տարածաշրջանային դաշնակիցները, Թուրքիայի գլխավորությամբ, ի դեմս վարչապետ Էրդողանի, հայտարարեցին, որ կպաշտպանեն միջազգային ամեն մի նախաձեռնություն, նույնիսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման բացակայությամբ:

Ֆրանսիայի հետ նույնտիպի դիրք էր բռնել նաեւ Մեծ Բրիտանիան, որի խորհրդարանն օրերս մերժեց Սիրիա ներխուժելու ծրագիրը: Դա Ռուսաստանի եւ Չինաստանի հակադրության պատճառով մերժվեց նաեւ ՄԱԿ-ի ԱԽ-ում: Այնուհետեւ Սիրիայի դեմ ռազմական գործողությունների մեջ մտնելուց հրաժարվեցին Իտալիան, Հունաստանը, Կանադան: Իսկ Գերմանիան հայտարարեց, որ կարող է գործել միայն ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի կամ Եվրոմիություն մանդատի առկայության դեպքում:

ՄԱԿ-ի մանդատը իրատեսական չի թվում, քանի որ Ռուսաստանն ու Չինաստանը դեմ են Սիրիայի դեմ ռազմական գործողություններին: ՆԱՏՕ-ն այդ գործողություններում չի տեսնում դերակատարություն ստանձնելու անհրաժեշտություն, իսկ ԵՄ-ի երկրները մեծամասնությամբ հակադրվում են այդ գործողություններին, որքան էլ չկասկածեն, որ ենթադրաբար նախագահ Բաշար Ասադի վարչակարգի օգտագործած քիմիական զենքը պատճառ է դարձել ավելի քան 1400 խաղաղ բնակչի սպանության, այդ թվում՝ երեխաների:

2003-ին Իրաքի դեմ երկրորդ պատերազմի սանձազերծումից առաջ Արեւմուտքը քիմիական զենք կուտակելու մեջ մեղադրել էր նախագահ Սադդամ Հուսեյնին: Տարիներ անց միայն մեղադրողները խոստովանեցին, որ քիմիական զենքը հակաիրաքյան երկրորդ պատերազմի պատրվակ է եղել, սակայն Իրաքում արդեն սպանվել էր 1,5 մլն խաղաղ բնակիչ: Սպանություններն առ այսօր շարունակվում են: Տես էջ 3

# Եվ/Ե՞ւ... Հայաստանը նստեց ռուսական աթոռին՝ դեռ չնստած եվրոպականին

*Մաքսային միությանը միանալու վերաբերյալ, պարզվում է, Հայաստանի Հանրապետությունը նույնիսկ որոշում ուներ, որի մասին Սերժ Սարգսյանը հայտարարեց Մոսկվայում*

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



«Հայաստանի Հանրապետության նախագահ Ս. Ա. Սարգսյանը հայտարարեց Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության որոշման եւ այդ նպատակով կատարելիք անհրաժեշտ քայլերը ձեռնարկելու մասին, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միության ձեւավորմանը մասնակցելու վերաբերյալ», ասվում է ՌԴ նախագահի հրավերով Մոսկվա աշխատանքային այցով մեկնած Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի համատեղ հայտարարության մեջ:

Ըստ Հայաստանի նախագահի նստավայրից տարածված պաշտոնական հաղորդագրության, 2013 թվականի սեպտեմբերի 3-ին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները հաստատել են Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության նպատակադրումը եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացների հետագա զարգացման ուղղությամբ:

Այդ համատեքստում Պուտինն իր աջակցությունն է հայտնել Հայաստանի Հանրապետության այդ որոշմանը եւ հայտնել այդ գործընթացին համակողմանիորեն աջակցելու ռուսական կողմի պատրաստակամությունը: Տես էջ 8

# Այազ Մութալիբովը «տնային կալանքի՞ է ենթարկվել»

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի էքս-նախագահ Այազ Մութալիբովը, որ երբեք քաղաքականությամբ չզբաղվելու երդման դիմաց Իլհամ Ալիեւից նախագահական թոշակ եւ մերձքաղաքային ամառանոց էր ստացել, «արդեն մեկ ամիս է, ինչ անհետացել է»: Այդ մասին երեկ հաղորդել է «Թուրան» գործակալությունը: Լրատվամիջոցի աղբյուրը տվյալ դեպքում Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Արազ Ալիզադեն է: Վերջինիս խոսքերով, «ներկայումս Այազ Մութալիբովը Բաքվում չէ եւ հայտնի չէ, թե երբ կվերադառնա»: Virtualaz.org-ը մեկնաբանության համար դիմել է Արազ Ալիզադեին, որն ասել է հետեւյալը. «Ես պարզապես ասել եմ, որ նրա (Մութալիբովի) տեղակայը կամ օգնականը չեմ, որպեսզի իմանամ նրա տեղաշարժերի մասին: Իսկ իրականում ես գիտեմ, թե որտեղ է Մութալիբովը, նրա հետ շփվում եմ: Տես էջ 3

# Սեյրան Օհանյան. Հակառակորդը զգում է, որ պատիժը ստանում է խախտման համար



Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը երեկ հաստատել է վարչապետ Տիգրան Սարգսյանի հայտարարությունը, որ Հայաստանը վերջին 3 տարիներին սպառազինության աննախադեպ գնումներ է իրականացրել:

«Վերջին երեք տարիներին ավելի մեծ թվով զենք ենք ձեռք բերել, քան նախորդ տարիներին: Վարչապետի խոսքերը ճիշտ են, եւ մենք շարունակելու ենք այդ գործընթացը», հայտարարել է **Սեյրան Օհանյանը**՝ նշելով, որ եթե 2000-2007 թվականներին Հայաստանի զինված ուժերը զբաղվել են սպառազինության նվազագույն պահուստների ստեղծմամբ, ապա 2007-ից հետո ձեռք են բերվել այնպիսի սպառազինություններ, որոնք թույլ կտան հակազդել Ադրբեջանի առավելություններին:

«Ձեռք ենք բերել զենիթահրթիռային համակարգեր, հեռավոր նշանառման եւ ճշգրիտ սպառազինություն, որը մեզ հնարավորություն է տալիս հարվածներ հասցնելու հակառակորդի կարեւոր օբյեկտներին ոչ միայն օպերատիվ խորության վրա, այլեւ ավելի հեռու՝ հետ պահելով նրան Հայաստանի նկատմամբ ագրեսիվ գործողություններից»:

Նախարարի գնահատմամբ՝ վերջին շրջանում հակառակորդի ակտիվացումը, հատկապես դիպուկահարների գործողությունները կապված են Ադրբեջանում մեկնարկող նախագահական ընտրությունների հետ:

«Հակառակորդի ակտիվացումները, դիպուկահարների գործունեությունը միշտ էլ եղել են, սակայն դրանց միշտ տրվում է պատասխան: Ընդ որում՝ պատասխաններն այնպիսին են լինում, որ հակառակորդը զգում է, որ պատիժն ինքը ստացել է խախտման համար», ասաց Օհանյանը՝ հավաստիացնելով, որ Ադրբեջանում կորուստներն ավելի շատ են լինում, քան ներկայացվում է:

Հ. Հ.

# Միասնական քարտեզը՝ ճշգրիտ սահմաններով



**Սեպտեմբերի 3-ը Հայաստանի եւ Արցախի միացյալ քարտեզի օրն էր:**

**Երկու հանրապետությունների միասնական քարտեզը տարածելու նախաձեռնությունը մի քանի տարի առաջ սկսվել է անհատների մակարդակով, իսկ այսօր տեղեկատվական անվտանգության մասնագետ Տիգրան Քոչարյանն ասում է՝ արդեն հասել են նրան, որ Հայաստանի ու Արցախի սխալ պատկերված քարտեզ տեսնելիս մարդիկ ինքնակամ են պահանջում փոխել եւ ճիշտ պատկերել:**

**Երեկվա ասուլիսի ժամանակ Տիգրան Քոչարյանը նշեց, որ հեռուստաընկերություններից առաջինն ԱԼՄ-ի եթերով ցուցադրվեց միասնական քարտեզը, ապա մյուս հեռուստաընկերությունները փոխեցին, իսկ վերջինը Հ2-ն էր, որ սկսեց ցուցադրել արդեն միասնական քարտեզը:**

**Տիգրան Քոչարյանն ասում է՝ միասնական քարտեզը նաեւ կարեւոր է նրանով, որ ամեն հայ հասկանա, որ Արցախը Հայաստանի անբաժան մասն է, նույնիսկ ազատագրված տարածքի արտահայտությունը կարելի է դուրս հանել կիրառումից, քանի որ այդ տարածքներն Արցախինն են, հետեւաբար՝ Հայաստանի անբաժան մասը:**

**Միացյալ քարտեզի շնորհիվ առաջինը հայ մարդն է կարողանում հստակ պատկերացնել եւ իմանալ Արցախի սահմանները, ապա նաեւ արտասահմանցի զբոսաշրջիկները, որոնք երբեմն սխալ պատկերված քարտեզների պատճառով վախենում էին այցելել Արցախ:**

**Տիգրան Քոչարյանն ասում է, որ միասնական քարտեզի տարածման գործում ներառված են եղել բազմաթիվ մարդիկ, սակայն սկզբնական ճանապարհը հեշտ չի եղել. «Կար վախի ահավոր մթնոլորտ. մտածում էին՝ եթե ճիշտ քարտեզը ցուցադրեին, ապա Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները կձերբակալեին իրենց»: Բայց ժամանակի ընթացքում հաղթահարվեց վախի մթնոլորտը, եւ հիմա սխալ քարտեզի դեպքում սկսվում է տեղեկատվական գրոհ, որպեսզի փոխվի այն:**

**Տեղեկատվական անվտանգության մասնագետը հավելում է, որ տեղեկատվական պայքարն ամենօրյա պայքար է, եւ հետագա քայլերից մեկը ինտերնետային որոնողական համակարգերի հետ աշխատելն է, որպեսզի որոնողական համակարգերն էլ ժամանակի ընթացքում տեղադրեն Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միացյալ քարտեզը:**

Ի. Պ.

## Ընթացիկ

Հայաստանում այս տարին իշխանափոխություն հնարավոր չէ, որեւէ գործոն դրա համար չկա, նախ՝ քաղաքական ուժերը ոչ միայն պասիվ են, այլեւ զորավոր չեն, քաղաքական կապիտալի պակաս է զգացվում: Այս մասին երեկ լրագրողների հարցերին պատասխանելիս ասաց ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը**. «Երբ ասում ենք իշխանափոխություն, բանաձեւում կամ այլընտրանքային ծրագրեր պետք է լինեն», նկատեց նա՝ հավելելով, թե այդպիսի ծրագրերը ժողովրդի մեջ զանգվածային նշանակություն ձեռք չեն բերում, շարժումներն էլ կիսատ են մնում:

# Գալուստ Սահակյանը Սարգսյան-Պուտին հանդիպումից սենսացիա չէր սպասում

Անդրադառնալով Պուտին-Սարգսյան հանդիպմանը՝ Գ. Սահակյանը խորհուրդ տվեց սենսացիայի չսպասել՝ գործնական, աշխատանքային քննարկումներ են (երբ Գ. Սահակյանն ասուլիս էր տալիս, այդ հանդիպումն արդեն սկսվել էր -Մ.Խ.)՝ կապված մեր հետագա դիրքորոշումներն ու մոտեցումներն առաջ տանելու հետ, եւ նա մեծ մասամբ դրական արդյունք էր սպասում:

Խորհրդարանական կառավարման անցնելու եւ սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հարցին պատասխանելով ՀՀԿ փոխնախագահը նշեց, թե հիմնական գործընթացների ծանրությունը հենց ընկած է Հանրապետական կուսակցության վրա: Սահմանադրական փոփոխությունները բավականին երկարատեւ գործընթաց են՝ հայեցակարգերի մշակման, դրանք հրապարակային դարձնելու եւ քննարկումների առումով: Հանձնախումբը, որ կաշխատի սահմանադրական փոփոխությունների վրա, առաջարկություններ կընդունի եւ քաղաքացիներից, եւ քաղաքական ուժերից ու քննարկումների արդյունքում հանրաքվեի դրվելիք փաստաթուղթը կներկայացնի: Սակայն հետաքրքրական է, որ անձամբ Գ. Սահակյանը դեմ էր խորհրդարանական կառավարման անցնելուն եւ դա պետության համար վտանգավոր համարեց. «Ես կողմնակից չեմ պետության խորհրդարանական կառավարման մոդելին: Քննարկումների ժամանակ ես իմ մոտեցումն արտահայտելու եմ», ասաց:

Հարցերի մի առյուծի բաժին բնականաբար վերաբերում էր «Փակ շուկայի» շուրջը դեպքերի զարգացումներին եւ քաղաքացիական շարժմանը:

Քաղաքացիական շարժումները կապված են այս կամ այն կոնկրետ խնդրին, եւ պետք չէ դրանք կապել ողջ քաղաքական գործընթացների հետ, սա էր ՀՀԿ փոխնախագահի կարծիքը. «Քաղաքական ուժերն են կերտում տվյալ երկրի քաղաքական գործընթացները, իսկ շուկա փակել կամ ուսանողական վարկի հարց բարձրացնել՝ դա ընդամենը տեսակետ կարող է լինել եւ քաղաքական պայքարի շրջանակից դուրս է: Բողոքելը նաեւ իրավունք է, եւ ցանկացած քաղաքացի բողոքի իր իրավունքն է իրացնում»: Ասոցիացման ծրագիր, Եվրասիական միություն՝ բոլորը մի կողմ դնենք ու զբաղվենք շուկան պատմաճարտարապետական տեսքի բերելով, ու մեր ժողովուրդը լավ կապրի, ազատամարտիկները թոշակ կստանան, ուսանողներն էլ անվճար կսովորեն», իր ծանոթ հեգնանքը խոսքի մեջ դրեց Գ. Սահակյանը՝ նշելով, որ եթե հանցանք կա, կատարվողը օրինական շրջանակներից դուրս է, պատժի է արժանի է, ու աշխատող հանձնախումբ կա, որն ի վերջո եզրահանգումների կգա «Փակ շուկայի» հարցով: Լրագրողները զարմացան՝ սարքեն- պրծնեն՝ էլ ինչ հանձնախումբ:

«**Ազգը**» հետաքրքրվեց աղմուկ հանած կանանց եւ տղամարդկանց իրավունքների հավասարության վերաբերող օրենքով՝ արդյո՞ք ժամանակին չէին կարող «գենդեր» բառը չներառել.



«Ձեր ասած օրենքի վերաբերյալ բազմաթիվ լսումներ են եղել՝ ոչ մի աղմուկ, ոչ մի բան, հիմնական գաղափարն էլ էն է, որ պաշտպանենք կանանց իրավունքները: Դրա մեջ էդ արձանագրումը ամեն մարդ ո՞նց է պատկերացնում՝ դա իր խնդիրն է», նշեց Գ. Սահակյանը՝ հիշելով, որ օրենքը սեռական փոքրամասնությունների, միասեռականների հետ կապողներ եղան. «Իմ ու իմ ընկերների եւ ոչ թե կուսակցության տեսակետը կարող եմ ասել՝ եթե պիտի վարքագիծ դրսեւորողներն իրենց իրավունքներն ավելի բարձրացնեն, քան՝ ասենք, սովորական, ոչ հիվանդ հասարակությունը, մեզ էդ տիպի ոչ Հայաստան է պետք, ոչ էլ՝ աշխարհ: Հայաստան դա չի ներմուծվելու»: Ըստ նրա՝ «հենց տեսան՝ փոփոխությունը պետք է լինի, կառավարությունն անում է, արդեն պայքարում են քարը քարի վրա չթողնելու, օրենքն ընդհանրապես հանելու համար» (խոսքը վերջերս կառավարության նախաձեռնությամբ «գենդեր» բառն օրենքից հանելուն եւ մի շարք այլ փոփոխություններին է վերաբերում). «Ստացվում է՝ մի օրենք պիտի գրենք, որով կանանց իրավունքները ավելի ցածր են, քան տղամարդկանց իրավունքնե՞րը», հեգնեց նա:

ՀՅԴ-ականների դեսպաններ նշանակելու փաստից Գալուստ Սահակյյանը տեղեկացված չէր, բայց նշանակումներին կուսակցական վերագրումները ոչ պարտադիր չհամարեց՝ բոլորն էլ Հայաստանի քաղաքացիներ են, ով տվյալ գործում կարող է առավելն անել, նա էլ կնշանակվի:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Վահան Հովհաննիսյանը հաստատել է, որ դեսպան գնալու առաջարկ է ստացել

ՀՅԴ-ական Վահան Հովհաննիսյանը yerkir.am կայքին տված հարցազրույցում փաստորեն հաստատել է այն լուրը, որ ինքը դեսպան է նշանակվելու. «Այո, ես ստացել եմ Հայաստանն արտասահմանում ներկայացնելու առաջարկ», ասել է նա՝ նշելով, թե դա իրեն անձնապես արված առաջարկ է եղել եւ իր կողմից ընդունելի: Նա հարցը ներկայացրել է իր կուսակցությանը, որը համաձայնություն է տվել: Նա ասել է, որ դա արտառոց առաջարկ չէ իր համար, քանի որ վերջին երեք տարիներին արդեն իսկ աշխատում էր արտաքին հարաբերությունների ասպարեզում (ղեկավարել է Հայաստանի պատվիրակությունը «Եվրոնեսթում եւ այլն). «Սխալվում են նրանք, ովքեր կարծում են, թե խորհրդարանական դիվանագիտությունը տրամագծորեն տարբերվում է պաշտոնական դիվանագիտությունից», նշել է նա: Թե որ երկրի դեսպան նշանակվելու առաջարկ է ստացել Վ. Հովհաննիսյանը՝ նա այդ մասին չի ասել, սակայն մամուլը գրում է՝ Գերմանիայում Հայաստանի դեսպան. «Արված առաջարկն ունի գործնական բնույթ եւ իմ քաղաքական հայացքների փոփոխությունների հետեւանք չէ, հետեւաբար չի կարող դառնալ նմանատիպ փոփոխության պատճառ: Մյուս կողմից՝ այս առաջարկն անողը վստահորեն քաջատեղյակ է եղել իմ հայացքներին եւ իր համար եւս խնդիր չի առաջացել: Նշանակում է, որ այս հարցում չի լինելու հակասություն, առավել եւս՝ դիրքորոշումները վերանայելու խնդիր», պարզաբանել է Վ. Հովհաննիսյանը:

Մ. Խ.

ՍԻՐՎԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

# Բռնադատված հոգեւորականի անվամբ հուշատախտակ Գյումրիում

## *Արտակ եպիսկոպոս Սմբատյանցը Շիրակի թեմի առաջին առաջնորդն է եղել*

**Շիրակի հոգեւոր թեմի առաջին առաջնորդ, երջանկահիշատակ Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի (1876-1937) անունն է կրում Գյումրու մի համեստ փողոց, որը սկսվում է քաղաքի կենտրոնական հրապարակի մոտից, Սբ Աստվածածին («Սբ Յոթվերք») եկեղեցու տարածքից: Անցած կիրակի օրվա պատարագից հետո այս փողոցի սկզբնամասում, եկեղեցու մուտքի դիմացի տան պատին, հայ բոլշեւիկների ձեռքով նահատակված հոգեւորականի անվամբ հուշատախտակ բացվեց:**

**Արտակ եպիսկոպոս Սմբատյանցը ժամանակի լուսավորյալ հոգեւորականներից մեկն է եղել. Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ավարտելուց առաջ, որտեղ նաեւ դասավանդել է, գերազանցությամբ ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, հետո նաեւ որպես ազատ ունկնդիր հետեւել է Դորպատի համալսարանի դասընթացներին: Աշխատակցել է «Արարատ» ամսագրին՝ հանդես գալով հոգեւոր թեմաներով քարոզներով, ուսումնասիրություններով, ռուսերենից ու գերմաներենից կատարած թարգմանություններով: Գրել է «Համառոտ պատմություն Տաթեւի վանքի», Գյումրու չորս եկեղեցու կառուցման համառոտ պատմությունը, այլ գործեր: 1920-21 թվականներին՝ հայ ժողովրդի համար խառնաշփոթ մի ժամանակաշրջանում, եղել է Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի կողմից Երեւանի թեմից առանձնացված Շիրակի նորաստեղծ թեմի հիմնադիր առաջնորդը եւ այնքան է սիրվել ժողովրդի կողմից, որ այնուհետեւ հինգ տարի Սյունյաց թեմը ղեկավարելուց հետո Շիրակի թեմական պատգամավորական ժողովի կողմից միաձայն նորից ընտրվել է Շիրակի թեմակալ առաջնորդ եւ վերադարձել այստեղ: Նա Շիրակի հոգեւոր կյանքը ղեկավարել է ընդհանուր հաշվով ինը տարի: Ընտրվել է նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ, պաշտոնավարել Մայր աթոռում, 1935 թ. սկզբներին նշանակվել Երեւանի թեմի հայրապետական լիազոր ներկայացուցիչ: 1937 թվականին պետանվտանգության մարմինների կողմից ձերբակալվել, գնդակահարվել է, 1957-ին արդարացվել...**

**Հուշատախտակին պատկերված Արտակ սրբազանի դիմապատկեր-խորաքանդակի հեղինակը գյումրեցի արվեստագետ Սամվել Պողոսյանն է: Բացման արարողությունը կատարվեց հոգեւոր դասի կողմից, գյումրեցի հավատացյալների, քաղաքացիների, լրագրողների մասնակցությամբ:**

Գ. Մ.

# Պատկերազարդ Աստվածաշունչը՝ հայերեն




**Լույս է տեսել պատկերազարդ Աստվածաշունչը հայերեն լեզվով: Գիրքը Հին ու Նոր կտակարանների հակիրճ տարբերակն է՝ կազմված Հայ առաքելական եկեղեցու հայերեն հրատարակված Աստվածաշունչ մատյանի տեքստերով:**

**Բանաստեղծ եւ թարգմանիչ Մաքսիմ Ոսկանյանը, որը գիրքը ծանոթագրել ու հրատարակության է պատրաստել, երեկ «Տեսակետ» ակումբում ասաց, որ սույն նկարազարդումներով Աստվածաշունչը հրատարակվել է շուրջ 100 լեզուներով, բայց հայերեն հրատարակվում է առաջին անգամ: Մաքսիմ Ոսկանյանը գրքին ծանոթացել է ռուսերեն տարբերակով, որտեղ նկատել է բազմաթիվ սխալներ: Հետեւաբար պետք էր ոչ թե թարգմանել, այլ կազմել հայերեն տարբերակը՝ օգտվելով մեր եկեղեցու հրատարակած Աստվածաշնչից:**

**Գրքում օգտագործվել են գեղանկարչության գերմանացի պրոֆեսոր Յուլիուս Շնոր ֆոն Կարոլսֆելդի (1794-1872) փայտի վրա արված փորագրությունների 240 պատկերները:**

**Մաքսիմ Ոսկանյանն ասում է, որ պատկերազարդ Աստվածաշունչը մատչելի է եւ նախատեսված բոլոր տարիքի ընթերցողների համար:**

**Պատկերազարդ Աստվածաշունչը հրատարակվել է «Լուսաբաց» հրատարակչությունում: Ըստ հրատարակիչ Վիտալի Ասլանյանի՝ «Լուսաբացը» ընդհանրապես նպատակ է դրել հրատարակելու հոգեւոր գրականություն, նաեւ գրականություն առողջ ապրելակերպի մասին: Ասվածի մի օրինակը 500 տպաքանակով տպագրված այս Աստվածաշունչն է: Այն արդեն վաճառվում է գրախանութներում՝ 7000-8000 դրամով:**

**Ըստ հրատարակչի՝ Կարոլսֆելդի փորագրությունների պատկերումը ուսանելի կլինի նաեւ կերպարվեստ ուսումնասիրողների համար:**

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ Տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Անցուդարձ

Օգոստոսի 30-ի երեկոյան «Բյուրոկրատ» գրատանը տեղի ունեցավ «Orange գրքի մրցանակ 2012» գրքի մրցույթում հաղթող ճանաչված ստեղծագործությունների` արդեն հրատարակված չորս գրքերի շնորհանդեսը: Դրանք են Հովհաննես Թեքգյոզյանի «Մաշկացավ» վեպը, Նարե Սահակյանի «Համոյի սիրած ծաղիկը» պատմվածքը, Երազիկ Գրիգորյանի «Ջերդ գերազանցություն վաս կախարդ պառավ» հեքիաթը եւ Շուշանիկ Թամրազյանի «Մոգ արքաներ» բանաստեղծությունների ժողովածուն:

Գրքերի ժամանակներում ու վայրերում հեղինակի որսացած բառերն ու հույզերն են, որոնք պարզ ու ազատ` առանց մտքի կամ բովանդակության կանխորոշման, միավորվել են մեկ յուրօրինակ ռիթմում:

Հիշեցնենք, որ մրցույթին մասնակցել են նրանք, ովքեր ներկայացրել են նախկինում երբեւէ չհրատարակված գրական երկ: «Orange գրքի մրցանակ 2012»-ին առաջին անգամ մասնակցեցին նաեւ Սփյուռքի` արեւելահայերեն կամ արեւմտահայերեն գրված ստեղծագործություններ: Մրցույթին

## Լույս են տեսել «Orange գրքի մրցանակ 2012»-ում հաղթած ստեղծագործությունները




«Ուրախությամբ եւ հպարտությամբ ենք այսօր ներկայացնում գրքերը, որոնք ստեղծվել են մրցույթի, ժյուրիի աշխատանքի, ընթերցասերների հետաքրքրության ու ներգրավվածության արդյունքում: «Orange գրքի մրցանակը» ընթերցողի եւ գրքի սիրահարների մրցանակ է: Մենք այս ընթացքում արեցինք հնարավորը` հանրային ընթերցանությունների միջոցով խթանելու հետաքրքրությունն ընթերցանության նկատմամբ: Մրցույթը նաեւ թույլ տվեց նոր անուններ բացահայտել», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Ֆրանսիս Ժելիբտերը:

Շնորհանդեսին ներկայացված գրքերից «Մաշկացավը» ժամանակակից պատմություն է: Այն, հեղինակի բնորոշմամբ, անտիվեպ է, որը ներկայացնում է նույն պատմության տարբեր պատառիկները տարբեր տեսանկյունից, տարբեր հերոսների աչքերով, իրականության տարբեր ըմբռնումներով:

«Համոյի սիրած ծաղիկը» պատմվածք է մի ընտանիքի մասին, որի անդամները հաճախ չեն զրուցում միմյանց հետ, որի ամենօրյա կյանքի շիկացած մթնոլորտում, շահերի բախման կենտրոնում մարդկանց ճակատագրերն են հայտնվում:

«Ջերդ գերազանցություն վաս կախարդ պառավ» հեքիաթի գլխավոր հերոսները մանկական ստեղծագործություններում հաճախ հանդիպող կերպարներ են` կախարդ պառավն ու ագռավը: Այս հեքիաթը սակայն փորձ է անում բոլորովին այլ տեսանկյունից նայելու, ընկալելու այս կերպարներին, անգամ` ընդառաջ գնալու իրենց չարության մեջ այնքան անհետեւողական, հաճախ` ոչ թե չար, այլ չարաճճի, երբեմն միամիտ, մտապես ծիծաղելի, նաեւ հանկարծակի հուզող այս երկու ընկերներին, որոնց չարությունը ոչ թե նրանց ուժն է, այլ թուլությունը:

Շնորհանդեսին ներկայացված «Մոգ արքաներ» բանաստեղծությունների ժողովածուն տարբեր ժամանակներում ու վայրերում հեղինակի որսացած բառերն ու հույզերն են, որոնք պարզ ու ազատ` առանց մտքի կամ բովանդակության կանխորոշման, միավորվել են մեկ յուրօրինակ ռիթմում:

ընդհանուր թվով մասնակցել է 470 ստեղծագործություն: Յուրաքանչյուր ժանրում հաղթող ճանաչված ստեղծագործությունը հրատարակվել է առանձին գրքով, 500 տպաքանակով, իսկ հեղինակը ստացել է դրամական մրցանակ 500.000 դրամի չափով:

«Orange գրքի մրցանակի» նպատակն է խթանել հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, բացահայտել ժամանակակից հայ գրողներին, օրեցօր զարգացող էլեկտրոնային մեդիայի միջոցով տարածել նրանց ստեղծագործությունները ընթերցողների առավել լայն զանգվածներին, աջակցել սկսնակ եւ արդեն հայտնի գրողներին հրատարակել իրենց անտիպ ստեղծագործությունները:

«Orange գրքի մրցանակն» արդեն երկրորդ անգամ կազմակերպվում եւ իրականացվում է «Հայ գրքի կենտրոն» հասարակական կազմակերպության հետ միասին:

«Orange գրքի մրցանակն» ամենամյա մրցանակ է: 2013 թվականի մրցույթի մեկնարկի մասին կհայտարարվի հավելյալ: Բոլոր մանրամասները` http://orangearmenia.am/book-prize/ էջում:

## Ձախողվել է Սիրիային հարվածելու Արեւմուտքի ծրագիրը

*1-ին էջից*

**Ըստ երեւույթին, Սիրիայում Ասադի վարչակարգին վերագրվող քիմիական զենքի օգտագործման մեղադրանքները նույնպես պատրվակ են, բայց ոչ այնքան լայնամասշտաբ պատերազմական գործողություններ ծավալելու, որքան Սիրիայի օդային տարածքը թռիչքազերծ գոտի հայտարարելու եւ ռազմական օբյեկտներին նպատակային հարվածներ հասցնելու համար, որպեսզի հնարավոր լինի կառավարական զորքերի դեմ ամրապնդել «Ազատ Սիրիայի բանակի» դիրքերը:**

**Թերեւս այդ առումով պատահական չէր, որ Սիրիայի դեմ ռազմական գործողություններին դիմելու հարցը Արեւմուտքում օրակարգ մտավ այն ժամանակ, երբ Ասադի վարչակարգը սկսեց ճնշել «Ազատ Սիրիայի բանակին», սահմանելով վերահսկողություն այն շրջաններում, որոնք անցել էին ընդդիմության ազդեցության տակ:**

**Ինչպես երեւում է, Սիրիային հարվածելու ծրագիրը ձախողված է: Մինչ այդ Ասադի վարչակարգին պատժելու համար Սիրիայի դեմ ռազմական գործողությունների իրականացման օգտին արտահայտվող Ֆրանսիան սկսել է այդ գործողությունները պայմանավորել ԱՄՆ-ի ձեռնարկումներով, իսկ նախագահ Օբաման, չունենալով դրա անհրաժեշտությունը, հարցը ներկայացրել է Կոնգրեսի քննարկմանը:**

**ԱՄՆ Կոնգրեսում հարցը կքննարկվի հաջորդ շաբաթվա վերջին: Արդյունքը դրական կլինի, թե բացասական, չգիտենք: Պարզապես, ներկայացնելով հարցը Կոնգրեսին, նախագահ Օբաման փորձել է ձերբազատվել Սիրիայի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկելու պարտավորությունից այն հույսով, որ քննարկման արդյունքները կլինեն բացասական:**

**Ինչո՞վ է պայմանավորված այս ամենը: Ըստ երեւույթին` Ասադի վարչակարգի տապալումից հետո Սիրիայում իշխանության ղեկին «Մուսուլման եղբայրների» հայտնվելու հավանականությամբ: Ինչ վերաբերում է ռազմական միջամտության հարցում ԵՄ-ի երկրների որդեգրած կրավորական դիրքորոշմանը, որն, ի դեպ, պաշտպանում է նաեւ Արաբական լիգան, ապա դա էլ պետք է պայմանավորվի Մերձավոր Արեւելքում ռազմաքաղաքական միանձնյա ներկայության ԱՄՆ-ի հավակնություններով, ինչպես նաեւ Սիրիայով միջնորդավորված Ռուսաստան-ԱՄՆ մրցապայքարի գիտակցությամբ:**

**Չի բացառվում, որ ԵՄ-ի երկրները կաշկանդված լինեն նաեւ Ռուսաստանի հետ առճակատման հավանականությունից: Համենայն դեպս, ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցները Սիրիայի դեմ ռազմական գործողություններից զերծ էլ մնան, միեւնույնն է, օրակարգ մտցնելով գործողությունների հարցը, միջազգային հանրության ուշադրությունից դուրս են մղել շուրջ 1 ամիս առաջ վերսկսված պաղեստին-իսրայելական բանակցությունները եւ նախադրյալներ են ստեղծել, որ ընդլայնվեն Եգիպտոսում նախագահ Մուրսիին իշխանության բերած «Մուսուլման եղբայրների» դեմ պայքարելու գեներալ Ալ Սիսիի հնարավորությունները:**



## Չափագրման գների զպում նաեւ մարզերի բնակիչների համար

**Կադաստրի համակարգում վերջին մեկ-երկու տարում կատարված փոփոխություններից էր քարտեզագրության, գեոդեզիայի եւ հողաշինարարության գործառույթների մասնավորեցումը, որի արդյունքում անշարժ գույքի չափագրումը սկսեց անցկացվել բացառապես կադաստրի կողմից համապատասխան որակավորում ստացած մասնավոր ընկերությունների կողմից: Խոսելով այս մասին, երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ` անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի տեղակալ Աշոտ Մուսայանը հայտնեց, որ չափագրման համար մասնավորի կողմից բարձր գների կիրառումը որոշակիորեն զսպելու համար «Գեոդեզիա եւ քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի կողմից առավել մատչելի գներով է մատուցվում այս ծառայությունը: Նա նաեւ տեղեկացրեց` իրենց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նման ծառայությունների իրականացումն անհրաժեշտ է նաեւ մարզերում:**

**Մարզերի բնակիչների համար անշարժ գույքի չափագրման առավել մատչելի գնով իրականացնելու համար նախատեսվում է «Գեոդեզիա եւ քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի կողմից մարզկենտրոններում եւ խոշոր բնակավայրերում ամրակցել մասնագետներ ու ստեղծել գրասենյակներ: Աշոտ Մուսայանը հայտնեց, որ համապատասխան որակավորում ստանալու համար համայնքները կարող են ուղարկել իրենց ներկայացուցիչներին, որոնց համար կկազմակերպվեն անվճար դասընթացներ եւ կտրվի համապատասխան որակավորում: Անհրաժեշտ պայմանների թվում է բարձրագույն կրթության առկայությունը կամ կադաստրում աշխատանքային փորձը:**

**Ներկայացնելով չափագրման համար շուկայական միջին գները` կադաստրի կոմիտեի տեղակալը դրանք համադրեց «Գեոդեզիա եւ քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկվող գների հետ: Համաձայն դրան, վերջինիս կողմից առաջարկվող գները մոտ 2-3 անգամ ցածր են միջին շուկայական գներից: Այսպես` եթե մասնավոր կազմակերպությունների կողմից բնակարանների չափագրման գինը գտնվում է 15-25 հազար դրամի սահմաններում, ապա «Գեոդեզիա եւ քարտեզագրություն» ՊՈԱԿ-ինը` 1 քմ չափագրումը մինչեւ 100 քմ բնակմակերեսի համար արժե 100 դրամ, այսինքն` չափագրման առավելագույն գինը 10 հազար դրամ է, մասնավորի կողմից տնամերձ հողամասերի չափագրումն արժե 25-30 հազար դրամ, «Գեոդեզիա եւ քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի չափագրումը` 15 հազար դրամ, մինչեւ 1000 քմ տնամերձ հող եւ 100 քմ մակերես ունեցող շինությունը մասնավոր չափագրման գինը 50-60 հազար դրամ է, «Գեոդեզիա եւ քարտեզագրություն» ՊՈԱԿ-ինը` մինչեւ 25 հազար դրամ: Նույն համամասնություն է նաեւ մինչեւ 1 հա արտադրական, հասարակական եւ գյուղատնտեսական նշանակության հողամասերի չափագրման գների դեպքում:**

**Ասվածին Աշոտ Մուսայանն ավելացրեց, որ նվազեցվել են նաեւ չափագրման դեպքերը: Չափագրում նախատեսված է իրականացնել, եթե գույքում փոփոխություններ են կատարվել եւ եթե գույքն ընդհանրապես չափագրված չէ:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

## Այազ Մութալիբովը...

*1-ին էջից*

**Բայց նա չի ուզում, որ իրեն անհանգստացնեն: Նա Ադրբեջանում է» /տես`http://haqqin.az/news/9381/:**

**Ալիզադեի այս հայտարարությունը կարծես ավելի է խճճում հարցը: Եթե Մութալիբովի «անհետացումը» կապված չէ նրա առողջական կամ կենցաղային այլ խնդիրների հետ, եւ նա գտնվում է Ադրբեջանում, «բայց չի ցանկանում, որ իրեն անհանգստացնեն», ուրեմն դրդապատճառները քաղաքական են:**

**Փաստորեն Մութալիբովը չի ցանկանում, որ «իրեն անհանգստացնեն» Ադրբեջանում նախագահական ընտրությունների թեմայով: Իշխանություններին նա խոստացել է երբեք քաղաքականությամբ չզբաղվել, հրաժարվել է սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահի պաշտոնից: Բայց ի՞նչ արժեք ունի էքս-նախագահի «ազնիվ կուսակցական» երդումը, եթե Իլհամ Ալիեւը նույնիսկ սեփական ստվերին է կասկածում իր դեմ «դավադրություն կազմակերպելու» մեջ:**

**Իրեն ապահով զգալու համար, բացառված չէ, նա Մութալիբովին պարզապես տնային կալանքի է ենթարկել` մինչեւ նախագահական ընտրությունները կավարտվեն: Այլ ենթադրության տեղ չի մնում, քանի որ ընտրությունների պաշտոնական մեկնարկից առաջ Մութալիբովը տեղական լրատվամիջոցներին ասել էր, որ «նախագահի թեկնածու առաջադրվելու մտադրություն չունի, լիովին պաշտպանում է Իլհամ Ալիեւի թեկնածությունը»:**

**Ըստ երեւույթին, գործող վարչախմբին դա չի բավարարել: Իրեն կատարյալ ապահովագրված զգալու համար Իլհամ Ալիեւը որոշել է Մութալիբովին առժամանակ մեկուսացնել: Ընդ որում, նախկին նախագահը Բաքվում չէ, բայց «գտնվում է Ադրբեջանում»: Ի՞նչ «ափսորավայր» է ընտրվել Մութալիբովի համար` Ադրբեջանի հատուկ ծառայությունների գաղտնիքն է:**

**Հետաքրքրական է, որ էքս-նախագահի մասին Ադրբեջանի օրենքով վերջինս համարվում է «անձեռնմխելի անձ», նրան տրվում է ցմահ դիվանագիտական անձնագիր` ազատ տեղաշարժի իրավունքով, ինչպես նաեւ` անձնական թիկնազոր եւ տրանսպորտային միջոց: Մութալիբովի դեպքում այդ ամենը պայմանականություն է, նա լիովին կախված է Իլհամ Ալիեւի կամքից:**

**Փաստորեն, իշխող վարչախմբի համար վտանգավոր է ցանկացած քաղաքական դեմք, այդ թվում` «կատարելապես հեղինակազրկված» Այազ Մութալիբովը, որ 20 տարի Ռուսաստանում բնակվելուց հետո էլ, պարզվում է, ուժեր համախմբելու եւ Իլհամ Ալիեւի հետ մրցակցելու հնարավորություն ունի: Հակառակ դեպքում ինչո՞ւ են իշխանությունները տնօրինել, որ նա «անհետանա» եւ չցանկանա, որ «իրեն անհանգստացնեն»:**

**Ադրբեջանում նախագահական ընտրություններին մնացել է մեկ ամսից մի փոքր ավելի ժամանակ: Այդ ընթացքում, ամենայն հավանականությամբ, Մութալիբովը «վաստակած հանգիստ կվայելի» ինչ-որ կառավարական ամառանոցում: Լռության համար նրան արդեն լիուլի վարձատրել են: Այժմ կարող են օգտագործել` ինչպես կցանկանան:**

# Անիշխանութիւն՝ նուիրապետական կարգի մէջ

Հայերս դարձած ենք համայն երկրագունդի բնակիչներ՝ ենթակայ՝ տարբեր երկիրներու օրէնքներուն, որոնք երբեմն հակասութեան մէջ են իրարու հետ: Սփիւռքի տարածքին ապրող հայերու թիւը վաղուց գերազանցած է հայրենաբնակներու քանակը: Այս ցրուածութիւնը կը պարտաւորէ իւրաքանչիւր հայ անհատը վեր բարձրանալու այն բաժանումներէն, որոնք պարտադրուած են պատմութեան կողմէ կամ դժբախտ իրողութիւններէ, եւ անդրադառնան, թէ ազգային միասնականութիւնը կ՚ենթադրէ յարիլ բարոյական սկզբունքներու կառոյցին՝ իրականացնել կարենալու մեր ազգի գոյատեւումը: Բարոյական այդ սկզբունքներու կառոյցին հաւասարապէս պէտք է ենթարկուին ոչ միայն հոգեւոր պետերը, այլ նաեւ հաւասարապէս աշխարհական ղեկավարները: Սակայն, այն, ինչ որ կը տեսնենք մեր ազգային իրականութեան մէջ, ուղիղ հակառակն է մեր վերաբերումի հրամայականներուն- անկանոնութիւն, քաոս եւ շփոթութիւն, ուր ամէն հեղինակութիւն ենթակայ է վարկաբեկման: Քննադատութիւնը – եւ մանաւորաբար՝ շինիչ քննադատութիւնը– ողջունելի պիտի ըլլար բնականաբար: Սակայն համացանցը, որ կրնար հայերը միացնող ազդակ մը հանդիսանալ վերածուած է Արշակաւանի, ուր ամէն անպատկառութիւն կը դառնայ թոյլատրելի: Հասած ենք հանգրուան մը, ուր խօսքի ազատութիւնը վերածուած է լուտանքի արտօնելիութեան:

Հետեւաբար որեւէ միջամտութիւն լուտանքներու այս տարափին - ի պաշտպանութիւն կամ ընդդէմ ոեւէ կողմի– միայն կրնայ աւելի վատթարացնել կացութիւնը: Միւս կողմէ, սակայն, անարդարանալի լռութիւնը ի տես սանձարձակ իմաստակութեանց պիտի խափանէր կիրթ ու զգօն քննարկումը մեր ազգը տագնապեցնող խնդիրներուն:

Մանաւանդ երբ կը մօտենանք Եղեռնի հարիւրամեակին, եւ երբ աւելի հրատապ կը դառնայ ազգային միասնականութիւնը, նշմարելի կը դառնայ անպատկառ վերաբերումը որեւէ հեղինակութեան, արժանապատուութեան ու սրբութեան նկատմամբ:

### Վտանգաւոր նախընթաց մը

Համացանցի դուռները լայնօրէն բացուած են եւ կեղտաջուրը կ՚ողողէ ամենուրեք՝ խօսքի ժողովրդավարական ազատութեան քողին ներքեւ:

Արժեւորած պիտի ըլլայինք անստորագիր գրութիւնները եւ աջ ու ահեակ սփռուած վիրաւորանքները՝ այստեղ անդրադառնալով անոնց: Սակայն մէկ անխորհուրդ արարք պէտք է մտահոգէ բոլորս, որովհետեւ կը բխի հայ եկեղեցւոյ նուիրապետական կառոյցի մէկ կարեւոր սիւնէն՝ Երուսաղէմի պատրիարքութենէն: Դարերու ընթացքին հայոց եկեղեցին միշտ երաշխաւորած է մեր ազգային միասնականութիւնը: Երբ կորսնցուցած ենք հայրենի հողն ու պետականութիւնը, եկեղեցին է, որ հանդիսացած է փրկարար լաստը՝ ժամանակի ալեկոծ ջուրերուն վերեւ: Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութիւնը նոյնինքն կառոյցն է հայ հոգիին, որ յաջողած է վերապրիլ ընդդէմ ժամանակի ահաւոր մարտահրաւէրներուն: Պարբերաբար մեր հոգեւոր պետերը ունեցած են վէճեր, ե՛ւ անհամաձայնութիւններ: Ի վերջոյ անոնք եւս ենթակայ են մարդկային ապրումներու: Սակայն յաճախ անոնք ցուցաբերած են խոհեմութիւն ու հեռատեսութիւն՝ բարձրանալու վեր իրենց անձնական եսերէն՝ պահպանելու համար նուիրապետական կառոյցը մեր եկեղեցւոյ՝ յաջորդ սերունդներու սիրոյն: Անգամ մը որ խորտակուի այդ կառոյցը, մենք կը վերածուինք վաչկատուն խմբաւորումներու՝ համաշխարհայնացման այս դարուն:

Սակայն այսօր վտանգուած է եկեղեցւոյ միասնական կառոյցը եւ ցարդ վիժած են կացութիւնը դարմանելու փորձերը: Մեր եկեղեցին կանգուն կը մնայ իր չորս գլխաւոր սիւներուն յենելով– Սուրբ Էջմիածնի եւ Կիլիկիոյ կաթողիկոսութիւններով եւ Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքութիւններով: Պարզ է, թէ թրքական կառավարութիւնը երբեք թոյլ պիտի չտայ Պոլսոյ գահուն վրայ պատրիարք մը, որ պիտի սատարէր մեր եկեղեցւոյ համազգային միութեան ու զօրացման: Ընդհակառակն, այն եկեղեցականը, որ կը բարձրանայ այդ գահուն վրայ, պիտի յօժարի քաղաքական գործիքի վերածուիլ թրքական իշխանութեանց ձեռքին: Երեւոյթ մը՝ որ բնորոշեց Մեսրոպ պատրիարք Մութաֆեանի գահակալութիւնը որ աւարտեցաւ անոր բառացի եւ ողբերգական փլուզումով՝ քաղաքական այդ ճնշումին ներքեւ:

Անթիլիասի կաթողիկոս Արամ Ա. անկասկած Հայ դատի եւ ազգային մշակոյթի նուիրուած արժանաւոր հայրապետ մըն է, ցարդ միայն աննշան քայլեր առած է դէպի եկեղեցական միութիւն՝ ենթակայ մնալով իր գահին ետին կանգնող քաղաքական ուժերուն, եւ այս՝ հակառակ անոր որ արդէն երկու տասնամեակէ ի վեր դադրած է ցուրտ պատերազմը: Սեպտեմբեր 21-28-ին Էջմիածնի մէջ կայանալիք եպիսկոպոսական ժողովը յոյսի նշոյլ մը կը ներշնչէր ներդաշնակութիւն եւ համագործակցութիւն ստեղծելու Մայր աթոռի եւ Անթիլիասի միջեւ, ընդգրկելով համայն նուիրապետական կարգը Հայաստանեայց եկեղեցւոյ: Սակայն առ այսօր ականահարուած կը մնան այդ յոյսերը, որովհետեւ Նորին Ամենապատուութիւն Նուրհան արք. Մանուկեան որոշած է պոյքոթի ենթարկել այդ ժողովը՝ բոլորովին անկապ պատճառով մը:

Նորին Ամենապատուութիւնը տակաւին նոր ընտրուած է այս տարի: Ի սկզբանէ իր թեկնածութեան մասին վերապահութիւններ կային եւ ան հազիւ քուէի աննշան առաւելութեամբ ընտրուեցաւ, ինչ որ կ՚ենթադրէ, թէ անվերապահ աջակցութիւնը չէր վայելեր ամբողջ միաբանութեան: Ան իշխանութեան գլուխ եկած էր անմիաբան միաբանութիւն մը գլխաւորելու: Ասիկա ազդանշան մըն էր, որ նաեւ կարգի բերէր իր պառակտուած տունը եւ հաստատէր, թէ ինք իսկապէս արժանի էր առաջնորդելու 14 դարերու պատմութիւն ունեցող պատկառելի հոգեւոր հաստատութիւն մը:

### Քաղաքական վտանգաւոր խաղ մը

Իշխանութիւնը ստանձնելէ ետք իր գործունէութեան սկիզբը բնորոշուեցաւ քաղաքական ձախաւեր քայլով մը՝ ուղղուած իսրայէլեան իշխանութեանց դէմ: Արդարեւ, պատասխանելով լրագրողի մը հարցումին կ՚ըսուի, թէ ան յայտարարած է. «Աշխարհի վախճանը պիտի չգայ եթէ իսրայէլեան կառավարութիւնը չճանչնայ հայոց ցեղասպանութիւնը»: Եւ այս յայտարարութիւնը կը կատարուի այն պահուն, երբ Նուրհան սրբազան դեռ կը սպասէր իր ընտրութեան վաւերացումին իսրայէլեան իշխանութեանց կողմէ: Օրէնքը կը պահանջէ որ Երուսաղէմի պատրիարքին ընտրութիւնը վաւերացուի Յորդանանի թագաւորին, պաղեստինեան իշխանութեան եւ Իսրայէլի կառավարութեան կողմէ: Որոշ ուշացումով Իսրայէլի իշխանութիւնները վերջիններն էին, որոնք վաւերացուցին պատրիարքին ընտրութիւնը, բացայայտ դժկամակութեամբ, որովհետեւ շատ հաւանաբար վերապահութիւններ ունէին այդ ընտրութեան նկատմամբ:

Երուսաղէմի սուրբ վայրերը կը գտնուին քաղաքական աշխարհի մէկ ամէնէն զգայուն կէտին վրայ: Իսրայէլի իշխանութեանց ամէն մէկ քայլը խնամքով հաշուարկուած է: Երուսաղէմի պատրիարքութեան վարկն ու իրավիճակը խնդրոյ առարկայ կը դառնան, երբ անխորհուրդ քայլ մը կ՚առնուի պատրիարքութեան կողմէ: Բոլոր հայերը արդարօրէն կը մտահոգուին պատրիարքին ու պատրիարքութեան հաշւոյն: Ամբողջ հայութիւնը պէտք է թիկունք կանգնի պատրիարքին, որ ան յաջողի անվտանգ նաւարկել այն խութառատ տարածքներէն, որոնք կը յատկանշեն Երուսաղէմը:

Իսրայէլի իշխանութեանց նկատմամբ իր անհակակշիռ ելոյթէն ետք պատրիարք հայրը այս անգամ իր զայրոյթը ուղղած է Հայց. եկեղեցւոյ հոգեւոր գերագոյն պետին դէմ, կարգ մը անյարիր պատճառաբանութիւններով: Ամէն պատրիարք, իր ընտրութենէն ետք, աւանդաբար ուխտի կ՚երթայ Սուրբ Էջմիածին իր ուխտը վերանորոգելու Իջման Սուրբ սեղանին առջեւ: Սակայն Նուրհան պատրիարք ցուցադրական կերպով գնաց Անթիլիաս, հաղորդագրութիւն մըն ալ հրատարակել տալով, որ ինք կը գտնուի Կիլիկեան աթոռի մօտ «անձնական» այցով մը: Հանրութիւնը իրաւասու է իմանալու այդ «անձնական» այցելութիւնը ինչպիսի՞ հրատապութիւն մը ունէր՝ աւանդութիւնը խախտելու աստիճան:

Երբ Վեհափառ հայրապետին ուղղուած իր անխոհեմ նամակը կը հետեւի Դաշնակցութեան Ֆրանսայի շրջանակի մէկ հաղորդագրութեան՝ մարդ կը դժուարանայ առնչութիւններ չգտնել անոնց միջեւ:

Անոր արարքները արդարացիօրէն զօրացուցին այն ենթադրութիւնները, թէ ան դարանակալ կը սպասէր Երուսաղէմի մէջ, հանդէս գալու Անթիլիասի կողքին, խորացնելու համար եկեղեցական բաժանումը եւ նուիրականացնելու երկիշխանութիւնը եկեղեցւոյ ծոցէն ներս:

Ցուրտ պատերազմի օրերէն ի վեր Անթիլիասի ետին կանգնող քաղաքական կուսակցութեան տեսակէտը եղած է Մայր աթոռի իշխանութիւնը սահմանափակել Հայաստանի եւ Սովետական կայսրութեան այսպէս կոչուած «ներքին թեմերու» վրայ, Անթիլիասի իշխանութիւնը տարածելով Սփիւռքի վրայ: Ատենին, այդ սկզբունքին ջատագովը հանդիսացած էր Սիմոն Վրացեան, եւ այսօր անոր հետեւորդները կը շարունակեն առաջ մղել այդ միեւնոյն սկզբունքը՝ արգելակելով եկեղեցւոյ միացումը:

Սակայն, աչք առնելով «համայնավար» կոչուելու զրպարտութեան վտանգը՝ Սփիւռքի եկեղեցիներուն մեծամասնութիւնը հաւատարիմ մնաց Մայր աթոռի գերագահութեան սկզբունքին:

### Միաբանութեան վախերը իրականութիւն կը դառնան

Օգոստոս 3, 2013 թուակիր բաւական անյարգալիր նամակով մը Նորին Ամենապատուութիւնը կը փորձէ անարգել Ամենայն հայոց հայրապետը: Փաստը, որ այդ նամակը երբեք օր համացանցի մէջ շրջագայելէ ետք կը հասնի իր հասցէագրուած տիրոջ, արդէն կը մատնէ այդ նամակին բուն դիտաւորութիւնը, որ է՝ դրսեւորել երկար ատենէ ի վեր թաքնուած վրէժխնդրութիւն մը: Օգտագործուած բառերն ու ածականները բոլորովին անվայել կը մնան եկեղեցականի մը վարկին, իսկ վիրաւոր հայերէնը՝ ցուցանիշ մտաւորական պատրաստութեան:

Համացանցի մէջ շրջան ընող որակումները Ամենայն հայոց կաթողիկոսի մասին կը բխին այլ դրդապատճառներէ որոնց հարկ է անդրադառնալ առանձին:

Պատրիարքին նամակը լեցուն է հակասութիւններով: Ան ենթադրաբար կու գայ պաշտպանելու Նորվան արք. Զաքարեանը, որ հրաժարած էր Ֆրանսայի թեմի առաջնորդութեան պաշտօնէն եւ իր հրաժարականը ընդունուած «տխրահռչակ» Հոգեւոր գերագոյն խորհուրդին կողմէ:

Պատրիարքին նամակը կը սկսի հետեւեալ նախադասութեամբ.- «Պատահաբար ձեռքս անցաւ Գերագոյն խորհուրդի յուլիս 31 թուակիր հաղորդագրութիւնը»: Ինչո՞ւ պատրիարքը «պատահաբար» կ՚իմանայ Գերագոյն Խորհուրդի «մէկ որոշումը», երբ երկու պատրիարքները, ի պաշտօնէ, համանախագահներն են այդ խորհուրդին, որ եկեղեցական հարցեր քննարկելու բնական ատեանն է, եւ ոչ թէ համացանցի պղտոր խառնարանը: Ուրեմն, սկսելու համար՝ պատրիարքը թերացած է մասնակցելու այդ նիստին եւ տէրը կանգնելու իր պաշտօնին, սակայն իր թերացման մեղքը կը փորձէ փաթթել այլոց վիզին եւ ապա կ՚անցնի քարոզախօսութեան՝ յաւակնոտ խորհուրդներ ընծայելով իր գերադասին. «Վեհափառ Տէր, թոյլ տուէք եղբայրաբար Ձեզի ըսել, թէ սպառնալիքը վայել չէ եկեղեցականին», եւայլն:

Սակայն, այնպէս կը թուի, թէ պատրիարքը առաջին հերթին ինքը ունի կարիքը իր տուած խորհուրդին, որովհետեւ իր կարգին, նամակին վերջաւորութեան, ինք հետեւեալ սպառնալիքը կ՚ուղղէ Ամենայն հայոց հայրապետին. «Որոշած եմ չմասնակցիլ Սեպտեմբեր 21-28-ին Էջմիածնի մէջ կայանալիք եպիսկոպոսաց ժողովին»: Աւելի ծանրացնելով կացութիւնը՝ կ՚աւելցնէ «թէեւ Արիս սրբազան Շիրվանեան ներկայ պիտի ըլլայ, բայց ան չի ներկայացներ Երուսաղէմի պատրիարքութիւնը»:

Երուսաղէմի միաբանութեան անդամները իրաւասու են իմանալու, թէ նման որոշում մը Տնօրէն ժողովի կա՞մքն է, որ կ՚արտայայտէ, թէ՞ պատրիարքին մէկ կամայական տնօրինումն է այդ:

Կարդալով Նորին Ամենապատուութեան նամակը, մարդ կը համոզուի, թէ Նորվան արք. Զաքարեանի հրաժարականը պատրիարքին ամենավերջին մտահոգութիւնը կը մնայ. քանի անոր դիտաւորութիւնը բոլորովին այլ հարցի մը կը վերաբերի: Արդարեւ, այս առիթով ան կը յիշատակէ Գարեգին Բ. կաթողիկոսի մէկ նամակը ուղղուած երջանկայիշատակ Թորգոմ արք. Մանուկեանին, խորհուրդ տալով անոր, որ աթոռակից պատրիարք մը նշանակէ, նկատի ունենալով վերջինիս առողջական անբարեյոյս վիճակը: Հայց. Եկեղեցւոյ ոեւէ անդամ, առաւել եւս եկեղեցւոյ Գերագոյն հոգեւոր պետը իրաւունք ունին մտահոգուելու անկարութեան մատնուած եկեղեցականին վիճակով, որուն ուսին կը բարդուին ծանրագոյն պատասխանատուութիւններ աշխարհի ամենէն վտանգաւոր մէկ շրջանին մէջ: Վստահաբար Նուրհան Սրբազան այդ նամակին մէջ դիտում մը նկատած է՝ իր թեկնածութիւնը շրջանցելու՝ յաջորդութեան գործընթացին մէջ:

Յետադարձ ակնարկով մը քննելով հարցը՝ եթէ Վեհափառը իսկապէս նման դիտում մը ունէր Նուրհան Սրբազանի նկատմամբ, արդարացուած եղաւ այդ մտահոգութիւնը՝ պատրիարքին անվայել պոռթկումով եւ քաղաքական անխորհուրդ ընթացքով:

*Խմբագրական «The Armenian Mirror-Spectator» շաբաթաթերթի*

# Ասադը «Ֆիգարոյի» էջերում հերքում է քիմիական զենքի օգտագործումը

## «Մերձավոր Արեւելքը վառոդի տակառ է»

Դամասկոսում ֆրանսիական «Ֆիգարո» թերթի հատուկ թղթակից Ժորժ Մալբրյունը բացառիկ հարցազրույց է ունեցել Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հետ: Հարցազրույցը սեպտեմբերի 3-ին կրճատումներով հրապարակվել է թերթի կայքէջում:



Թղթակիցը սկզբում հարցնում է, թե Բաշար Ասադը կարո՞ղ է արդյոք ապացուցել, որ սիրիական բանակը օգոստոսի 21-ին Դամասկոսի արվարձանում քիմիական զենք չի օգտագործել, ինչում նրան մեղադրում են Բարաք Օբաման եւ Ֆրանսուա Օլանդը:

Ասադը հայտարարում է, որ մեղադրողը պարտավոր է ներկայացնել ապացույցներ: Օբաման եւ Օլանդը չեն կարողացել ապացույց ներկայացնել նույնիսկ սեփական ժողովուրդներին: Խոսքը նման զենք ունենալ կամ չունենալու մասին չէ: «Ենթադրենք, թե մեր բանակն ուզում է զանգվածային բնաջնջման զենք օգտագործել: Արդյոք հնարավո՞ր է դա անել մի գոտում, որտեղ հենց ինքն է գտնվում, եւ որտեղ այդ զենքից զինվորներ վիրավորվեցին, ինչպես որ դա հավաստում են հիվանդանոց այցելած ՄԱԿ-ի տեսուչները: Որտե՞ղ է տրամաբանությունը», իր հերթին հարց է տալիս Ասադը:

Նրա խոսքերով՝ Մերձավոր Արեւելքը «վառոդի տակառ» է, եւ այսօր կրակը մոտենում է դրան: Հարկավոր է մտածել ոչ միայն Սիրիայի հակահարվածի, այլեւ մյուս հետեւանքների մասին: «Երբ տակառը պայթի, ամենքը կկորցնեն իրավիճակի վերահսկողությունը», ասում է նախագահը, ավելացնելով, որ քաոսն ու ծայրահեղականությունը կտարածվեն, խորացնելով տարածաշրջանային պատերազմի վտանգը:

Այն հարցին, թե Ֆրանսիան արդյոք չի՞ դարձել Սիրիային թշնամի երկիր, Ասադը պատասխանում է, որ ահաբեկիչներին ֆինանսական ու ռազմական օգնություն հասկացնող ամեն ոք Սիրիայի ժողովրդի թշնամին է: Խոսքը ոչ թե Ֆրանսիայի ժողովրդի, այլ այդ պետության քաղաքականության մասին է: Թշնամանքը վերջ կգտնի, երբ այդ քաղաքականությունը փոխվի: Հակառակ դեպքում կտուժեն Ֆրանսիայի շահերը:

Պ. Ք.



# ԱՄՆ-ից բացատրություն են պահանջում նախագահների լրտեսման համար

**Բրազիլիայում եւ Մեքսիկայում ԱՄՆ-ի դեսպաններին ԱԳՆ են կանչել պարզաբանումներ ստանալու ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) լրտեսման փաստերի կապակցությամբ: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Մեքսիկայի արտգործնախարարությունը ԱՄՆ-ի իշխանություններից պահանջել են «մանրակրկիտ կերպով քննել» այն տեղեկությունները, որ ԱԱԳ-ն ընտրարշավի ժամանակ հետեւել է երկրի գործող նախագահ Էնրիկե Պենյա Նյետոյի նամակագրությանը: Քննության նպատակը պետք է լինի այն անձի բացահայտումը, ով պատասխանատու է լրտեսության համար: Մեքսիկայի իշխանությունները ընդգծել են, որ այդ տեղեկությունը ի սկզբանե չեն համարի ճշմարտացի, բայց միեւնույն ժամանակ կտրականապես դատապարտել են երկրի քաղաքացիների լրտեսումը եւ միջազգային նորմերի խախտումը:**

**Բրազիլիայի կառավարությունը իր հերթին անվերապահորեն դատապարտել է ամերիկյան իշխանությունների գործողությունները, դրանք անվանելով «անընդունելի միջամտություն» երկրի ներքին գործերին, եւ ԱՄՆ-ից անհապաղ բացատրություններ է պահանջել երկրի նախագահ Դիլմա Ռուսեֆի նամակագրությանը հետեւելու մեղադրանքների կապակցությամբ:**

**Էնրիկե Պենյա Նյետոյի եւ Դիլմա Ռուսեֆի լրտեսման վերաբերյալ ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի տրամադրած տվյալները սեպտեմբերի 1-ին հրապարակել էր ամերիկացի լրագրող Գլեն Գրինուոլդը: Լրագրողը մասնավորապես բերել էր քաղվածքներ Նյետոյի նամակագրությունից: Բացի դրանից, ԶԼՄ-ները հաղորդել էին նրա հեռախոսազրույցների գաղտնալսման մասին: Ըստ որում, չի հաղորդվում՝ այժմ շարունակվո՞ւմ է արդյոք լրտեսումը:**

**Բրիտանական «Գարդիան» թերթի լրագրող Գլեն Գրինուոլդը, որն ապրում է Ռիո դե Ժանեյրոյում, Սնոուդենից ստացել էր բոլոր գաղտնի փաստաթղթերը: Բրիտանական թերթը այդ նյութերը հանձնել էր ամերիկյան «Նյու Յորք թայմսին», իսկ «Գարդիանի» խմբագրությունում եղած բոլոր տվյալները Մեծ Բրիտանիայի իշխանությունների պահանջով ոչնչացվել էին:**

Պ. Ք.

# «Հզբոլլահը» զորահավաք է հայտարարել



Լիբանանյան «Հզբոլլահ» շիա արմատական խմբավորումը հայտարարել է իր կողմնակիցների զորահավաք, հաղորդում է Ֆրանսպրեսը՝ վկայակոչելով այդ խմբավորման եւ Սիրիայի կառավարության տեսակետներն արտահայտող «Ալ Ախբար» թերթի հրապարակումը:

Այդ տեղեկությունների համաձայն, շարժման ղեկավարությունը «իր բոլոր սպաներին եւ մարտիկներին կոչ է արել զբաղեցնել համապատասխան դիրքեր»: Լիբանանի հարավում գտնվող Տյուրոս (Սուր) քաղաքի բնակիչների խոսքերով՝ այն տպավորությունն է ստեղծվում, թե «Հզբոլլահը» իրոք իր ակտիվիստների ընդհանուր զորահավաք է հայտարարել, թեեւ պաշտոնապես այդ մասին չի հայտարարվել:

Շարժման բազմաթիվ մասնակիցները վերջին 5 օրերին լքել են իրենց տները: Համանման իրավիճակ է նաեւ Բեքաայի հովտում, որտեղ նույնպես ուժեղ են շիա խմբավորման դիրքերը: Բեյրութի հարավային մասում գտնվող «Հզբոլլահի» պահակակետերում փորձառու մարտիկներին փոխարինելու են եկել պատանիներ ու դեռահասներ, որոնք ոչ մի անգամ չեն մասնակցել մարտական գործողությունների:

«Հզբոլլահի» մարտիկները, որպես նախազգուշական միջոց, զանգվածաբար անջատում են բջջային հեռախոսները. նրանք չեն ուզում հայտնաբերվել բջջային կապի ազդանշանով:

«Ալ Ախբարի» տվյալներով, լիակատար մարտավիճակի են բերվել նաեւ Սիրիայում ընդդիմության դեմ երբեւիցե չկռված կառավարական զորամասերը: Վերջիններս «Հզբոլլահի» հրամանատարության հետ կազմակերպել են կառավարման ճգնաժամային կենտրոն: Բարձր մարտավիճակի են բերվել լիբանանյան խմբավորման այն ստորաբաժանումները, որոնք զինված են «երկիր-երկիր» դասի հրթիռներով:

«Հզբոլլահի» ներկայացուցիչները տվյալ իրավիճակի առնչությամբ որեւէ մեկնաբանություն չեն անում:

Փորձագետների գնահատումների համաձայն, շիա արմատականների շարժումն ունի 30 հազար մարտիկ, որոնց 1/3-ը տիրապետում է մարտական մեծ փորձի: Խմբավորումը զինված է «երկիր-երկիր» դասի տասնյակ հազարավոր հրթիռներով եւ այլ ծանր զինատեսակներով:

Զորահավաքը եւ զորքերի մարտավիճակի բարձրացումը ժամանակի առումով համընկան հարեւան Սիրիայի ճգնաժամի սրմանը: Օգոստոսի 21-ի քիմիական գրոհից հետո Արեւմուտքի երկրները ԱՄՆ-ի գլխավորությամբ չեն բացառում Սիրիայի կառավարական բանակի դիրքերին օդային հարվածներ հասցնելու հնարավորությունը: Արեւմուտքն Ասադին է մեղադրում քիմիական զենքի օգտագործման համար:

Պ.Ք.

# Եգիպտոսի օդուժը ոչնչացրել է տասնյակ գրոհայինների

## Գազայի սահմանի մոտ կստեղծվի անվտանգության գոտի



Եգիպտական օդուժի ուղղաթիռները սեպտեմբերի 3-ի առավոտյան Սինայի թերակղզում մի շարք հարվածներ են հասցրել իսլամիստ գրոհայինների կուտակման վայրերին եւ հենակետերին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը՝ վկայակոչելով երկրի պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցչին:

Գրոհիչ ուղղաթիռները «օդ-երկիր» դասի առնվազն 13 հրթիռ են արձակել: Դրա հետեւանքով Մուքաղաա եւ Թումա գյուղերի մոտակայքում սպանվել եւ վիրավորվել են տասնյակ գրոհայիններ: Եգիպտացի զինվորականների տվյալներով՝ Գազայի հատվածի սահմանի մոտ գտնվող այդ տարածքում մարտը դեռ շարունակվում է:

Պաշտպանության նախարարության հայտարարությունից չի երեւում, թե ցամաքային ուժերը մասնակցո՞ւմ են արդյոք այդ գործողությանը: Կառավարական ուժերի կորուստների մասին ոչինչ չի հաղորդվում:

Նախօրեին Կահիրեն հայտարարել էր, որ Գազայի սահմանի մոտ ստեղծելու է 25-500 մետր լայնությամբ եւ 10 կմ երկարությամբ անվտանգության գոտի: Ըստ Եգիպտոսի իշխանությունների մտահղացման, այդ գոտին թույլ կտա կրճատել գաղտնի թունելներով մարդկանց եւ բեռների անօրինական տարանցումը Գազայի հատվածից դեպի Եգիպտոս եւ հակառակ ուղղությամբ:

Կահիրեին հատկապես մտահոգում է այն փաստը, որ տվյալ թունելներով երկու ուղղությամբ տեղափոխվում են ռազմական բեռներ, ինչպես նաեւ տեղաշարժվում են արմատական իսլամիստներ: Դա առանձնապես լուրջ խնդիր դարձավ Եգիպտոսում իսլամիստ նախագահ Մուհամմեդ Մուրսիի տապալումից հետո, որի կողմնակից ծայրահեղականները հայտարարել են նոր իշխանությունների դեմ զենքը ձեռքին պայքարելու պատրաստակամության մասին:

Պ. Ք.

ԳՈՒՅԺ

# Գրական-մշակութային անդաստանը ծանր կորուստ կրեց



Կյանքից հեռացավ Հայաստանի գրողների միության նախագահ, անվանի մտավորական եւ հասարակական գործիչ, հրապարակախոս, թարգմանիչ, բանաստեղծ Լեւոն Զաքարի Անանյանը:

Լեւոն Անանյանը ծնվել է 1946 թ. հոկտեմբերի 13-ին, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղում: Բարձրագույն կրթություն ստացել է ԵՊՀ ժուռնալիստիկայի բաժնում: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1971 թվականին՝ «Մանկավարժ» թերթից:

Լեւոն Անանյանի անունը սերտորեն կապվում է լայն համարում ունեցող «Գարուն» ամսագրի հետ, որտեղ նա աշխատանքի է անցել 1975 թվականին, իսկ 1990 թվականից՝ գլխավորել այդ հանդեսը: «Գարունի» էջերում նա հանդես է եկել բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներով, ակնարկներով, էսսեներով, որոնք գրավել են հասարակական լայն ուշադրություն: Որպես հրապարակախոս նա արժանացել է «Ոսկե գրիչ» մրցանակի (1983 թ.):

Իր խմբագրման տարիների «Գարունը», չնայած դժվարին ժամանակներին, շարունակեց մնալ գրական կյանքի բաբախուն զարկերակ եւ նոր սերնդի դարբնոց: Լեւոն Անանյանի նախաձեռնությամբ 1992 թվականին հիմնադրվեց այդ ամսագրին կից «Ապոլոն» հրատարակչությունը, որը բնագրից կատարված թարգմանություններով մեր ընթերցողին ներկայացրեց համաշխարհային գրականության բարձրակարգ նմուշներ:

2001 թվականից Լեւոն Անանյանը ղեկավարում էր Հայաստանի գրողների միությունը: Նրա բեղմնավոր գործունեության արդյունքում հայաստանյան գրական կյանքը նոր վերելք ապրեց: Հայրենիք-Սփյուռք գրական առնչությունների ընդլայնմանն ու խորացմանը նպատակամղված հետեւողական քաղաքականությունը, ժամանակակից հայ գրականությունը միջազգային ասպարեզ հանելուն եւ մեր երկիրն այլ ժողովուրդների գրականության հանդիպատեղի դարձնելուն միտված ջանքերը տվեցին շոշափելի պտուղներ: Նրա ղեկավարության օրոք Հայաստանի գրողների միությունը հատկապես մեծ դեր խաղաց երիտասարդ գրողների կայացման գործում: Աշխուժացավ հրատարակչական գործունեությունը՝ ՀԳՄ հրատարակչություն եւ տպարան հիմնելու շնորհիվ: Իր անդուլ եռանդով ծառայելով գրական ընտանիքի հոգսերին ու խնդիրներին՝ Լեւոն Անանյանը զգալիորեն նպաստեց մեր ընդհանուր մշակութային կյանքի աշխուժացմանը:

Կազմակերպչական եւ հասարակական բազմածավալ աշխատանքներին զուգահեռ՝ նա շարունակում էր ստեղծագործող մարդու իր գործունեությունը, տպագրելով հոդվածներ, կազմելով «Գարուն» ամսագրի մատենագիտությունը, խմբագրելով գրքեր, հրատարակելով «Արմաս եւ սաղարթ», «Տագնապներ», «Դիմակայություն», «Ժամանակ եւ ոգի» էսսեների եւ հոդվածների ժողովածուները, «Հուշանվեր» եւ «Հավերժ պահմտոցի» բանաստեղծական հատորյակները: Նրա գրչին է պատկանում նաեւ «Թատրոնը բեմում եւ էկրանին» աշխատությունը:

Լեւոն Անանյանի գործունեությունը գնահատվել է պետականորեն. նրան շնորհվել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչում, արժանացել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի:

Հայրենասեր մտավորականի, գրական անխոնջ մշակի, Հայաստանում, Արցախում եւ արտերկրում լայն ճանաչում ձեռք բերած գործչի՝ Լեւոն Անանյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր գրական-մշակութային հանրության եւ ընթերցողների սրտերում:

*ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ*

* * *

Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի մահվան կապակցությամբ ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ:

Լեւոն Անանյանի հոգեհանգիստը տեղի կունենա սեպտեմբերի 4-ին՝ ժամը 18.00-ից՝ Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցում, հուղարկավորությունը՝ սեպտեմբերի 5-ին՝ ժամը 14.00-ին՝ Հայաստանի գրողների միության շենքից:

* * *

Լեւոն Անանյանի մահվան կապակցությամբ «**Ազգի**» խմբագրությունը խորազգաց ցավակցություններ է հայտնում որդուն՝ Արամ Անանյանին, մյուս հարազատներին, Գրողների միությանը եւ բոլոր ընկերներին:

## Ցավակցություն

Խոր վշտով տեղեկացանք Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի մահվան մասին: Լեւոն Անանյանն իր ուրույն ներդրումն է ունեցել Հայաստանի գրական կյանքի եւ հայ-լեհական գրական կապերի ամրապնդման գործում: Մեր ցավակցություններն ենք ուղղում պարոն Անանյանի ընտանիքի անդամներին, ընկերներին, ինչպես նաեւ Հայաստանի ողջ գրական-մշակութային հանրությանը:

Հայաստանում Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Զդիսլավ Ռաչինսկի

# Գիրքի մը առաքելութիւնը

*(Գիրքիս հրատարակութեան առթիւ)*

«Առաքելութիւն» բառը կը գործածեմ ոչ սուրբ գրային իմաստով, այլ որպէս առաջադրանք, դեր: Գիրքը նախ որպէս յօդուածաշարք լոյս տեսաւ Ռամկավար Ազատական կուսակցութեան Լոս Անճելըսի «Նոր օր» շաբաթաթերթին մէջ 2011-2012 թուականներուն, ապա ամբողջ շարքը շատ թեթեւակի խմբագրումներով յանձնուեցաւ հրատարակութեան:

Գիրքս արդիւնքն է Պատմական Հայաստան կատարած երկու ուղեւորութիւններուս, 2011 եւ 2012 ամառը: Անիկա նաեւ պտուղն է այն ներքին անկասելի մղումին, որ կուտակուած էր տասնամեակներու ընթացքին: Բնաւ յաւակնութիւնը չունիմ մտածելու, թէ եզակի գործ մը տեսած եմ այս գիրքով, որովհետեւ ինծմէ առաջ այլ հայրենակիցներ նոյնպէս թուղթին յանձնած են իրենց տեսածներն ու զգացածները, խոհերն ու մտածումները: Մեր տարաբախտ մեծ հայրերն ու մայրերը յաճախ չեն արտայայտուած «կորուսեալ դրախտին» մասին, իսկ եթէ արտայայտուած են, ապա լացակումած աչքերով, որովհետեւ քաղցր ծննդավայրի յիշողութիւնները երբեք չմարեցան իրենց մէջ: Ի յարգանս իրենց անլուր տառապանքներուն եւ ի յիշատակ միլիոնաւոր նահատակներու՝ ուզեցի հրատարակութեամբ մը ժամանակի քննութեան յանձնել փորձառութիւնս՝ Ցեղասպանութեան 100-եայ տարելիցի սեմին:




Ես մեր ծննդավայր-պատմական հայրենիքի արահետներով փափաքեցայ անցնիլ նախ ապրելու համար այն զգացումը, որ կը կոչուի հայրենիքի, պատմական հայրենիքի կարօտ: Ապրեցայ մորմոքը մեր կորուստներուն, որուն խորագոյնը ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻԻ կորուստն է՝ Հայկական դատի բուն իսկ էութիւնը եւ միտք բանին, որուն համար կը պայքարինք՝ յաճախ խուլ ականջներու, կոյր աչքերու եւ ուրացող պետութեան մը (եւ այլ պետութիւններու) դէմ: Երկու առիթներով երկու անգամ 14 օր եղայ Մուսալեռէն Կիլիկիա, Կապադովկիա, Բարձր Հայք, բուն Արեւմտեան Հայաստան, մինչեւ Կարս, Անի, Պայազէտ, Իկտիր, Վան, Մուշ Սասուն, Տիարպեքիր-Ամիդ, Եդեսիա-Ուրֆա, Մարաշ-Գերմանիկ, Սասուն ու Զէյթուն, հօրենական ծննդավայր Չորք-Մարզպան (Տէօրթ-Եոլ) եւ այլուր: Երկու անգամ ալ միեւնոյն ներքին թելադրութիւններու մղեցին զիս թուղթին յանձնել տեսածներս, խոհերս, հանդիպումներս թուրք, քիւրտ, ասորի, ալեւի, ինչպէս նաեւ «թաքուն» հայերու հետ: Փորձեցի գիրքիս մէջ տեղեկագրական (informative) սահմաններէն անդին երթալ եւ նկարագրել առայժմ այնտեղ ապրող, ըսել կ՚ուզեմ՝ մեր պապենական հողերուն վրայ նստած ժողովուրդին հետ ունեցած զրոյցներս ու թեթեւակի վիճաբանութիւններս: Ֆեդհիէ Չեթին իր պատգամը կու տայ ուխտագնացներուս: Ինծի համար մարտահրաւէր մը դարձաւ թափանցել այդ մարդոց հոգիներէն ներս եւ անոնցմէ լսել ափսոսանքներ, զղջումի խօսքեր, չքմեղանքներ, անցեալի պատահարները դատապարտող խօսքեր, նոյնիսկ՝ «հրամմեցէ՛ք, եկէք ՁԵՐ երկիրը եւ մենք առաջուան պէս շարունակենք ապրիլ»:

Գիրքիս մէջ ուրիշ նպատակ մըն ալ փորձած եմ դնել՝ վեր հանել իւրաքանչիւր վայրի հերոսական ու ողբերգական անցեալը, տնտեսական ու մշակութային կարեւորութիւնը, ճարտարապետական կառոյցներու վեհութիւնը, որովհետեւ Պատմական Հայաստանի մէջ ամէնուր են մեր ճարտարապետական կոթողները, որոնք իրենց աւերուած կամ կիսաւեր վիճակին մէջ անգամ կը վկայեն հայ ժողովուրդի բնիկ տարր ըլլալու մասին: Առաքելութիւն ու նպատակ մը դրի իմ յանձնառութեանս մէջ, որ կը յուսամ կ՚իրականանայ, երբ լոյս տեսնեն անոր թրքերէն, անգլերէն, արաբերէն եւ ռուսերէն թարգմանութիւնները: Գիրքս պիտի ուզէի որ օտարախօս, հայ կամ ոչ հայ, բայց մա՛նաւանդ թուրքիացի հետաքրքրուողները կարդան առ ի լուսաբանութիւն, յուսալով որ աւելի լաւ կը ծանօթանան մեր մորմոքի ահաւորութեան ու մեր պահանջատիրութեան արդարացիութեան: Հաւատացէք, որ իւրաքանչիւր գլուխ թուղթին յանձնուեցաւ անտես, բայց խեղդող արցունքի մէջէն անցնելով: Փորձեցի հնարաւորին չափ լալկան չըլլալ, բարձր պահելով վերապրողներու զաւակն ու թոռը ըլլալու հպարտութիւնը եւ, ինչու չէ, նաեւ հայ ընթերցողին փոխանցել օր մըն ալ ազգովին ՀՈՂ վերադառնալու երազը: Կանգնած եմ Արածանի գետի ափին. տեսիլը՝ Մեսրոպասար (Բալու): Ներկայացուող գիրքը երկու անգամ արժանացաւ հասարակութեան ուշադրութեան ու գնահատանքին՝ առաջինը տպուելէն առաջ, 2012-ի աշնան, երբ Ռամկավար կուսակցութեան Արեւմտեան ԱՄՆ-ի Հայ իրաւանց խորհուրդը կազմակերպեց ուղեւորութիւններուս որպէս արդիւնք իմ տպաւորութիւններուս ու խոհերուս նուիրուած հանդիպում մը: Այստեղ հանդէս եկայ որպէս պահանջատէր եւ միաժամանակ Թուրքիոյ տարածքին ստեղծուած ընկերային ու քաղաքական նոր պայմաններու հետ համաշունչ նոր ռազմավարութիւն մը սկսելու անհրաժեշտութեան շուրջ:

2013-ի մայիս 31-ին, դարձեալ ՌԱԿ Հայ իրաւանց խորհուրդի կազմակերպութեամբ, կայացաւ հրատարակութեան գինեձօնը: Երկու հանդիսութիւններն ալ տեղի ունեցան Քալիֆորնիոյ Գլենդէյլ քաղաքի Հանրային գրադարանին մէջ: Այժմ անհամբեր կը սպասենք գիրքին հրապարակ իջնելուն սեպտեմբերի կէսերուն (1000 օրինակ), որուն պիտի յաջորդեն այլ վայրերու մէջ ծրագրուած գինեձօններ: Հրատարակութենէն գոյացած ամբողջ եկամուտը պիտի յատկացուի բազմալեզու թարգմանութիւններու նպատակին, որ, յուսանք, կ՚ամբողջանայ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի օրերուն:

Դոկտ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ
Լոս Անճելըս

# Հայ կոմպոզիտորի ստեղծագործության պրեմիերան կկայանա «Amadeus» փառատոնի բեմում

Երիտասարդ կոմպոզիտոր Արթուր Աքճելյանի «Միհր 2-րդ» ստեղծագործության պրեմիերան կկայանա սեպտեմբերի 5-ին կամերային եւ սիմֆոնիկ երաժշտության հեղինակավոր «Amadeus» փառատոնի շրջանակներում: Երկը կկատարեն Namascae Lemanic Modern նվագախումբը եւ դիրիժոր Վիլյամ Բլանկը: «Amadeus» դասական երաժշտության փառատոնն ամեն տարի անցկացվում է Ժնեւին մերձ Տուվիեր կոչվող վայրում: Այս տարի փառատոնը մեկնարկել է օգոստոսի 29-ին եւ կշարունակվի մինչեւ սեպտեմբերի 7-ը: Միջոցառմանն արդեն հասցրել են մասնակցել բազմաթիվ կամերային նվագախմբեր՝ աշխարհի տարբեր երկրներից:

«Փառատոնին կինչի ութ կատարողի համար գրված գործս, որը վերջացրել եմ այս տարվա հուլիսին: Այն անվանել եմ «Միհր 2-րդ», անվանումը կապված է հայկական դիցաբանության հետ: Նախնական գաղափարը ձեւավորում է սեփական ինքնագիտակցությունը, եւ աստիճանաբար առաջանում է այն հուզական դաշտը, որտեղ տարբեր գործընթացներ են ի հայտ գալիս: Այնուհետեւ սկսվում են կոմպոզիտորական բազում փնտրտուքները՝ բովանդակության ստեղծումը, միջոցները, որոնք կհամապատասխանեն քո լսածին: Տվյալ դեպքում փորձել եմ գտնել հնարավորինս պարզ կոնցեպտներ, որոնք ամբողջ ընթացքում կաշխատեն հօգուտ գործի: Ինչպես նաեւ կիրառել եմ տարրեր ժամանակակից երաժշտության տարբեր դպրոցներից՝ հարմոնիկ, երաժշտական եւ ձայնային ամբողջություն ստեղծելու համար», «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում նշեց Արթուր Աքճելյանը:

Երիտասարդ կոմպոզիտորը վերջերս գրեց Կոնցերտ թավջութակի եւ նվագախմբի համար՝ որպես դիպլոմային աշխատանք, որը սեպտեմբերի 27-ին կինչի Ժնեւի կոնսերվատորիայի նվագախմբի կատարմամբ:

Արթուր Աքճելյանը ծնվել է 1984 թ. Երեւանում: 2007-ին ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: 2008-ին ընդունվել է Ժնեւի Երաժշտական բարձրագույն դպրոցը եւ տեղափոխվել Շվեյցարիա: Մասնակցել է կանադական Domaine Forget եւ անգլիական Arditti քառյակի մասնագիտացված դասընթացներին:

*«Արմենպրես»*

# ՀՀ հավաքականը սկսեց ընտրական մրցախաղերի նախապատրաստությունը

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը սկսել է նախապատրաստվել սեպտեմբերի 6-ին Պրահայում չեխերի հետ կայանալիք ընտրական մրցախաղին: Հավաքականի առաջին բաց մարզմանը ներկա չէր Հենրիխ Մխիթարյանը, որը դեռ չէր ժամանել Երեւան: Մարզվողների թվում էր նաեւ պաշտպան Ռոբերտ Արզումանյանը, որը վնասվածքի պատճառով չէր մասնակցել «Ակտոբեի» վերջին հանդիպմանը: Երեւանում Ռոբերտը բուժզննում է անցել, որի արդյունքում պարզվել էր, որ վնասվածքը լուրջ չէ: Եթե Արզումանյանը հասցնի լրիվ ապաքինվել, ապա կմասնակցի չեխերի հետ հանդիպմանը: Ի դեպ, Արզումանյանի խաղը գրավել է ռուսական թիմերի՝ «Անժիի», «Վոլգայի» եւ «Կռիլյա Սովետովի» մարզիչների ուշադրությունը: Նրանց դուր է եկել հայ ֆուտբոլիստի խաղը Եվրոպայի լիգայի մրցաշարում Կիեւի «Դինամոյի» հետ մրցախաղում:



Բաց մարզումից հետո հավաքականի 3 անդամները՝ Ռոման Բերեզովսկին, Յուրա Մովսիսյանն ու Լեւոն Հայրապետյանը հանդիպել են լրագրողներին:

**Ռոման Բերեզովսկի**- Եթե նկատել եք, մենք ընտրական այս մրցաշարում դեռ օպտիմալ կազմով չենք խաղացել. մշտապես եղել են վնասվածք ունեցող եւ որակազրկված ֆուտբոլիստներ: Կարծում եմ, որ հենց դա էր մեզ խանգարում ավելի շատ հաղթանակներ տոնելու: Հավաքականի ֆուտբոլիստների համար շատ կարեւոր է խաղային պրակտիկա ունենալը: Ինձ համար կարեւոր էր, որ «Դինամոյի» կազմում 3 խաղ անցկացրեցի:

**Յուրա Մովսիսյան**- Բոլորին էլ քաջ հայտնի է, թե ինչպիսի ներուժ ունեն չեխերն ու դանիացիները: Երկուսի դեմ էլ խաղացել ենք, տարբեր արդյունքներ են գրանցվել: Առաջիկա խաղերը շատ բարդ են լինելու մեզ համար: Պետք չէ սպասել, որ Չեխիային հեշտությամբ կհաղթենք: Ոչ ոք թող չսպասի, որ Դանիային էլ այստեղ 8 գնդակ ենք խփելու, քանի որ մրցակցի հարկի տակ հաղթել ենք 4-0 հաշվով: Ակումբում մեր ելույթները չեն կարող ազդել հավաքականում մեր ցուցադրած խաղի որակի վրա: Ուրիշ երկրների ֆուտբոլիստների համար հավաքականն այն նշանակությունը չունի, ինչ մեզ համար Հայաստանի հավաքականը: Մենք խաղում ենք հավաքականի պատվի, մեր ծնողների համար: Հավաքականում լավ մթնոլորտ է տիրում: Ալբանիայի հավաքականը թույլ թիմ չէր: Կարելի է շատ պատճառներ գտնել, թե ինչու պարտվեցինք: Այդ խաղում կարեւոր ֆուտբոլիստներ էին բացակայում: Այսօր թեկուզ մեկ ֆուտբոլիստի բացակայությունը հավաքականում շատ է զգացվում:

**Լեւոն Հայրապետյան**- Ես երկար ժամանակ չեմ խաղացել, սակայն իմ թիմում անհատապես մարզվում էի, որպեսզի մարզավիճակս պահպանեմ: Այժմ էլ ձգտում եմ, որ ավելի լավ խաղամ: Ինչ խոսք, հավաքականում դժվար է յուրաքանչյուր խաղում տարբեր կազմով հանդես գալը, քանի որ ֆուտբոլիստները պետք է միմյանց հասկանան, հատկապես պաշտպանությունում: Իմ կարծիքով, չեխերի հետ պետք է փորձենք խաղալ այնպես, ինչպես խաղացինք Դանիայի հետ: Հարկավոր է հավաքվել ու գործել մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար սկզբունքով:

# Լիլիթ Մկրտչյանը բարելավել է ցուցանիշները

Ֆ԰ԻԴԵ-ի դասակարգման նոր աղյուսակում Լեւոն Արոնյանը պահպանել է վարկանիշն (2813) ու 2-րդ հորիզոնականը: Անփոփոխ է մնացել նաեւ դասակարգման առաջատար Մագնուս Կառլսենի վարկանիշը՝ 2862: Իսկ ահա Վլադիմիր Կրամնիկը վարկանիշը ավելացրել է 10-ով (2794) եւ 5-րդ տեղից բարձրացել է 3-րդ հորիզոնական՝ այնտեղից դուրս մղելով իտալացի Ֆաբիանո Կարուանային, որը վարկանիշը նվազեցրել է 17-ով (2779):

Անփոփոխ են մնացել լավագույն տասնյակում տեղ գրաված մյուս շախմատիստների վարկանիշները: 4-րդ հորիզոնականը 2785 վարկանիշով զբաղեցնում է Ալեքսանդր Գրիշչուկը: 6-10-րդ տեղերում են Վիշվանաթան Անանդը (2775), Շահրիյար Մամեդյարովը (2775), Սերգեյ Կարյակինը (2772), Հիկարու Նակամուրան (2772) եւ Վեսելին Թոփալովը (2769):

Բացի Արոնյանից, եւս 5 հայ շախմատիստներ են ընդգրկված 100 ուժեղագույնների կազմում: Անփոփոխ են մնացել Սերգեյ Մովսիսյանի (2699, 51-րդ տեղ), Վլադիմիր Հակոբյանի (2691, 59-րդ տեղ), Գաբրիել Սարգսյանի (2671, 72-րդ տեղ) եւ Տիգրան Պետրոսյանի (2660, 91-րդ տեղ) վարկանիշները: Իսկ ահա ֆրանսահայ գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը վարկանիշը նվազեցրել է 2-ով (2653) եւ 98-րդ տեղից նահանջել է 100-րդ հորիզոնական:

Կանանց դասակարգման ցուցակի անփոփոխ առաջատարը Հուդիթ Պոլգարն է (2696): Լավագույն տասնյակում են նաեւ Հոու Յիֆանը (2609), Համպի Կոներուն (2607), Աննա Մուզիչուկը (2585), Չժաո Սյուեն (2579), Նանա Ձագնիձեն (2556), Ցզյույ Վենցզյունը (2535), Կատերինա Լահնոն (2532), Նադեժդա Կոսինցեւան (2531) եւ Պիա Կրամլինգը (2515):



Հայաստանից 100 ուժեղագույն շախմատիստուհիների թվում են Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը: Էլինան պահպանել է իր 2470 վարկանիշը՝ մեկ հորիզոնականով նահանջելով 29-րդ տեղը: Իսկ ահա Լիլիթ Մկրտչյանը, որ վերջերս Եվրոպայի կանանց անհատական առաջնությունում բրոնզե մեդալ էր նվաճել, զգալիորեն բարելավել է ցուցանիշները: Նա 15-ով բարձրացրել է վարկանիշը (2469) եւ 36-րդ տեղից տեղափոխվել է 30-րդ հորիզոնական:

Հայաստանն իր միջին վարկանիշով (2661) պահպանել է 4-րդ հորիզոնականը: Առջեւից են ընթանում Ռուսաստանը (2742), Ուկրաինան (2703) եւ Չինաստանը (2669): Լավագույն տասնյակում են նաեւ Ֆրանսիան (2659), Հունգարիան (2655), ԱՄՆ-ը (2651), Հնդկաստանը (2642), Հոլանդիան (2639) եւ Իսրայելը (2630): Ադրբեջանը 2623 վարկանիշով 13-րդ տեղում է, Վրաստանը (2593) 17-րդն է:

## ՇԱԽՄԱՏ

# Կարեն Գրիգորյանը նվաճեց գլխավոր մրցանակը

**Գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը ժամկետից շուտ նվաճեց շախմատի Հայաստանի առաջին խմբի առաջնության հաղթողի տիտղոսը: Նախավերջին՝ 12-րդ տուրում հաղթելով Արթուր Չիբուխչյանին, Կարենը վաստակեց 9,5 միավոր եւ անհասանելի դարձավ մրցակիցների համար: Գրիգորյանն այդ մրցախաղով ավարտեց ելույթներն առաջնությունում, քանի որ վերջին տուրում նրա մրցակիցը՝ Գեւորգ Հարությունյանը մրցաշարի 6-րդ տուրից այլեւս չի մասնակցում մրցումներին:**

**7,5 միավորով 2-րդ տեղում Լեւոն Բաբուջյանն է, որը պարտության մատնեց Հովիկ Հայրապետյանին: 6,5-ական միավորով հաջորդ տեղերում են Հովհաննես Գաբուզյանն ու Տիգրան Քոթանջյանը: Գաբուզյանը հաշտություն կնքեց Հայկ Վարդանյանի հետ, իսկ Քոթանջյանն ազատ էր խաղից:**

**Տիգրան Հարությունյանը հաղթեց Արտավազդ Հայրապետյանին, Վահե Բաղդասարյանը պարտության մատնեց Գրիգոր Դիլանյանին, իսկ Դավիթ Քալաշյանն առավելության հասավ Մանուել Պետրոսյանի նկատմամբ:**

# Կրամնիկն աշխարհի գավաթակիր

**Ռուսաստանցի գրոսմայստեր Վլադիմիր Կրամնիկը դարձավ շախմատի աշխարհի գավաթակիր: Դմիտրի Անդրեյկինի հետ եզրափակիչ մրցախաղի 4-րդ պարտիան ավարտելով ոչ-ոքի, Կրամնիկը 2,5-1,5 հաշվով շահեց մրցախաղը:**

# 3-րդ փուլը կկայանա Տաշքենդում

**Շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 3-րդ փուլը կանցկացվի Տաշքենդում սեպտեմբերի 18-30-ը: Էլինա Դանիելյանի մրցակցուհիները կլինեն Կոներուն, Չժաո Սյուեն, Ցզյույ Վենցզյունը, Լահնոն, Խոթենաշվիլին, Չմիլիտեն, Ստեֆանովան, Կոստենյուկը, Դրոնավալին, Գիրյան եւ Մումինովան:**

# Մխիթարյանը ստիպել է մոռանալ Գյոտցեին

**Ֆրանսիական «Էկիպը» անդրադարձել է Դորտմունդի «Բորուսիայի» կազմում Հենրիխ Մխիթարյանի ելույթին, որը Ֆրանկֆուրտի «Այնտրախտի» հետ խաղում 2 գոլի հեղինակ էր դարձել՝ ապահովելով թիմի հաղթանակը:**

**«Հենրիխ Մխիթարյանը գերազանց հանդիպում անցկացրեց «Այնտրախտի» դեմ: Նրա 2-րդ գոլը վկայում է, որ ֆուտբոլիստը տեխնիկապես գերազանց է պատրաստված: Մխիթարյանն աջ եզրից տեղափոխվեց կենտրոն եւ ձախ ոտքով դիպուկ հարված կատարեց դարպասի հեռավոր անկյունը: Մխիթարյանն արժանի փոխարինողն է Մարիո Գյոտցեին եւ արդեն ստիպել է «Բորուսիայի» երկրպագուներին մոռանալ «Բավարիա» տեղափոխված ֆուտբոլիստին», գրում է «Էկիպը»:**

**«Բորուսիայի» գլխավոր տնօրեն Հանս-Յոահիմ Վացկեն արդարացված է համարում Մխիթարյանի դիմաց 27,5 մլն եվրո վճարելը: «Այնտրախտի» հետ խաղից հետո նա մտել է հանդերձարան ու դիմելով Մխիթարյանին, ասել է. «Այժմ դու գիտես, թե ինչու ենք այդքան գումար վճարել քեզ ձեռք բերելու համար»:**

# Ֆեդերերը դուրս մնաց պայքարից

Նյու Յորքում ընթացող թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունում սկսվել են 1/8 եզրափակչի հանդիպումները: Այս փուլում անհաջողության մատնվեց հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը՝ շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը: Նա պարտվեց իսպանացի Թոմի Ռոբրեդոյին (6-7, 3-6, 4-6)



Իսկ ահա գլխավոր մրցանակի մյուս հավակնորդը՝ իսպանացի Ռաֆայել Նադալը հաջողությամբ հաղթահարեց հերթական արգելքն ու մտավ քառորդ եզրափակիչ: Նա չափազանց լարված մրցախաղում 4 խաղափուլում պարտության մատնեց գերմանացի Ֆիլիպ Կոլշրայբերին (6-7, 6-4, 6-3, 6-1): Իսպանիայի եւս մեկ ներկայացուցիչ՝ Դավիթ Ֆեռերը մտավ հաջորդ փուլ՝ առավելության հասնելով սերբ Յանկո Տիպսարեւիչի նկատմամբ (7-6, 3-6, 7-5, 7-6):

Կանանց մրցապայքարում հերթական հաղթանակը տոնեց Սերենա Ուիլյամսը՝ պարտության մատնելով իր հայրենակցուհի Սլոան Ստիվենսին (6-4, 6-1): Հաջորդ փուլ մտավ նաեւ ռուսաստանցի Եկատերինա Մակարովան, որը հաղթեց լեհ Ագնեշկա Ռադվանսկային (6-4, 6-4): Քառորդ եզրափակչում կխաղան նաեւ Կառլա Սուարես Նավարոն, Լի Նան, Ռոբերտա Վինչին, Ֆլավիա Պենետան եւ Դանիելա Հանտուխովան:

# Պրանդելին չի մոռացել վետերաններին

**Ֆուտբոլի Իտալիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Չեզարե Պրանդելին հայտարարել է, որ ընտրանու դռները նախկինի պես բաց են նաեւ վետերանների՝ Ալեսանդրո դել Պիեռոյի, Ֆրանչեսկո Տոտիի եւ Անտոնիո դի Նատալեի համար:**

**«Նրանցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ աշխարհի առաջնությունում: Հարկավոր է ստուգել ֆուտբոլիստներին մրցաշարի մեկնարկից մի քանի շաբաթ առաջ: Մենք պետք է հետեւենք այդ ֆուտբոլիստներին: Օրինակ, Դել Պիեռոն նախկինի պես էնտուզիազմով է ֆուտբոլ խաղում: Չպետք է մոռանալ նաեւ Կասանոյի մասին», նշել է Պրանդելին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Եվ/ե՞ւ... Հայաստանը նստեց ռուսական աթոռին՝ դեռ չնստած եվրոպականին

*1-ին էջից*

Ըստ էության, այս համատեղ կոչված հայտարարությունը, որից դուրս պաշտոնապես ներկայացվում են նաեւ բանակցությունների մյուս թեմաները ու նաեւ Հայաստանի նախագահի խոսքը, կարող են անկարեւոր թվալ, քանի որ Մաքսային միությանը միանալու Հայաստանի, պարզվում է, արդեն իսկ կայացրած որոշումը շատ բան է փոխում առկա իրավիճակում:

Այդուհանդերձ, անվտանգության այդքան չարչրկված համատեքստում էլ կարելի է միայն կարեւորել, որ համատեղ հայտարարության մեջ ասվում է. «Տարածաշրջանային կայունության եւ անվտանգության ապահովման ուղղությամբ համատեղ աշխատանքի համատեքստում նշվեց կողմերի փոխադարձ պատրաստակամությունը ռազմաքաղաքական եւ ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցության հետագա ամրապնդման եւ փոխգործակցության կատարելագործման հարցում»:

Բացի դրանից, ըստ հաղորդագրության, «Երկու երկրների նախագահները, ըստ նույն փաստաթղթի, առանձին հայտարարությամբ հաստատել են Հայաստանի եւ Ռուսաստանի վճռականությունը եվրասիական տարածքում տնտեսական ինտեգրման գործընթացները զարգացնելու հարցում»: Ավելին, «արտահայտվեց երկու երկրների պատրաստակամությունը Հայաստանի տնտեսության արդիականացմանն ու դիվերսիֆիկացմանը եւ երկրի էներգետիկ անվտանգության ամրապնդմանն ուղղված երկկողմ ծրագրերի գործնական իրականացման հարցում»:

Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահները նշել են ներկայումս գործող Հայկական ԱԷԿ-ի «շահագործման ժամկետի երկարաձգմանն ուղղված աշխատանքների, ինչպես նաեւ նոր ատոմային էլեկտրակայանի կառուցման նախագծի կարեւորությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Ռուսաստանից Հայաստան էներգակիրների մատակարարման հարցում»: Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարները ընդգծել են նաեւ ենթակառուցվածքային ծրագրերի, այդ թվում նաեւ երկաթուղային հաղորդակցության, ինչպես նաեւ նոր լոգիստիկ եւ հաղորդակցման ուղիների իրագործման ուղղությամբ համատեղ ջանքերը շարունակելու կարեւորությունը:

Այս ամենն ինչ-որ բան նշանակում են, սակայն ակնհայտորեն բավարար հիմք չեն, որպեսզի Հայաստանը հայտարարեր, թե արտառոց եւ ոչ որոշակի Եվրասիական միությանը հեռանկարում միանալու մեծ ցանկություն ունի:

Մյուս կողմից, համատեղ հայտարարության տեքստն ու այն, ինչ բառացի ասել է Հայաստանի նախագահը, այնքան էլ չեն համընկնում՝ ի ցույց դնելով, որ համատեղ հայտարարության տեքստի վրա աշխատանքում ավելի շատ ճնշումներ են իրագործվել, քան դա երեւում է Հայաստանի նախագահի խոսքում: Մասնավորապես, Սերժ Սարգսյանի խոսքում Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու ոչ թե որոշման մասին է խոսվում, այլ ցանկության:

«Մենք հանգամանալի քննարկում անցկացրինք նաեւ եվրասիական ինտեգրացիայի հարցերի վերաբերյալ, եւ ես հաստատեցի Հայաստանի ցանկությունը՝ միանալու Մաքսային միությանը եւ ներգրավվելու Եվրասիական տնտեսական միության ձեւավորման գործընթացում», ասել է Սերժ Սարգսյանը, մինչդեռ համատեղ հայտարարությունը ստորագրելիս համաձայնել է, որ ինքը հայտարարել է Հայաստանի այդպիսի որոշման մասին:

Այդուհետեւ, սակայն, Սարգսյանը կարծես ուղղում է սեփական խոսքերը. «20 տարի առաջ Հայաստանը Ռուսաստանի եւ ԱՊՀ այլ երկրների հետ գործընկերությամբ ձեւավորեց իր ռազմական անվտանգության համակարգը Հավաքական անվտանգության պայմանագրի ձեւաչափում: Այս տասնամյակների ընթացքում համակարգն ապացուցել է իր կենսունակությունը եւ արդյունավետությունը: Այժմ ՀԱՊԿ-ի մեր գործընկերները ձեւավորում են տնտեսական փոխգործակցության նոր հարթակ: Ես քանիցս ասել եմ, որ գտնվելով ռազմական անվտանգության մի համակարգում, անհնար է եւ անարդյունավետ մեկուսանալ համապատասխան աշխարհատնտեսական տարածքից»:

Եվրոպան էլ է իր բաժին պարզաբանումը ստանում, որը, թե որքանով կբավարարի Եվրոմիությանը, դժվար թե երկար սպասելու խնդիր լինի: Սերժ Սարգսյանը հայտարարել է. «Սա ռացիոնալ որոշում է, այս որոշումը բխում է Հայաստանի ազգային շահերից: Այս որոշումը եվրոպական կառույցների հետ մեր երկխոսությունից հրաժարում չէ: Այս տարիների ընթացքում Հայաստանը, եվրոպական գործընկերների աջակցությամբ, անցկացրել է լուրջ ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Եվ այսօրվա Հայաստանը, այս իմաստով, շատ ավելի արդյունավետ եւ մրցակցային պետություն է, քան տարիներ առաջ: Մենք մտադիր ենք եւ շարունակելու ենք բարեփոխումները»:

Իսկ այ եվրոպացիները մտադի՞ր են արդյոք շարունակել իրենց աջակցությունը հայաստանյան բարեփոխումներում՝ պիտի որ հստակեցվի, քանի որ նույն եվրոչինովնիկները քանիցս հայտարարել են, թե Հայաստանը երկու աթոռի վրա նստել չի կարող, ասել է թե չի կարող Եվրոմիության հետ խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտի ստեղծել՝ անդամակցելով նաեւ Մաքսային միությանը: Չնայած սկզբում եվրոչինովնիկները բավականին կոշտ էին այս հարցը դնում, վերջին շրջանում հայտարարություններն առավել մեղմ էին՝ այն ձեւակերպումներով, թե Հայաստանին ոչ ոք չի ճնշում, եւ որ նա իրավունք ունի ինքնուրույն որոշելու իր ապագան:

Հայաստանյան պաշտոնյաներն էլ փորձում էին հանրությանը պարզաբանել, թե հնարավոր է չհրաժարվել Ռուսաստանի գրեթե պարտադրած միության մեջ ներգրավվելու հեռանկարից, միեւնույն ժամանակ, եվրոբարեփոխումներով առաջ ընթանալու տարբերակ ունենալ:

Ամեն դեպքում, ստացվել է մի իրավիճակ, երբ Հայաստանը նոյեմբերին Եվրոմիության հետ Ասոցիացման համաձայնագրի նախաստորագրումը չիրագործած՝ արդեն իսկ նստեց Ռուսաստանի առաջարկած աթոռին, եվրոպականը իբր առջեւում է, բայց... Եվ այն ժամանակ, երբ Եվրոմիության հետ բանակցությունները փաստացի ավարտված էին, Մաքսային միությանը միանալու որոշման կայացումից հետո նախ պետք է դիմել, ապա սկսել բավականին տեխնիկական բանակցությունները, որոնք, ստացվում է, առջեւում են, ընդ որում, այդ միությանը միանալու հարցում անհրաժեշտ է անդամ պետությունների համաձայնությունը:

Ամեն դեպքում, Սերժ Սարգսյանի այս հայտարարությունը հաստատապես խնդիրներ է առաջ բերելու եվրոպական ուղղությամբ, այն էլ՝ բավականին լուրջ: Որեւէ պարագայում պետք չէ ենթադրել, թե զգալի ներդրումներ արած ու եվրոպական ինտեգրման ուղղությամբ բարեփոխումների ողջ ընթացքին աջակից Եվրոմիությունն ուղղակի կհամաձայնի Հայաստանի այսպիսի դիրքորոշմանը, անգամ եթե հայ պաշտոնյաները բերեն աշխարհի բոլոր հիմնավոր ու անհիմն փաստարկները, այն պարզ պատճառաբանությամբ, որ բավականին երկար տեւած ու ավարտին հասցված Ասոցիացման համաձայնագրի բանակցություններին հատկացված ժամանակահատվածը, փաստացի, կդառնա վատնված: Իսկ պրագմատիկ Եվրոպայում հատկապես միջոցների վատնումը ոչ ընդունելի է, ոչ էլ հեշտությամբ ներելի:

### ԿԱՐԵՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# «Սեւ գիրքը» լույս տեսավ թուրքերեն




**2011 թ.ին Երեւանում հրատարակված «Սեւ գիրք» ժողովածուն օրերս լույս տեսավ թուրքերեն լեզվով: Հայոց ցեղասպանության եւ թուրքական ոճիրների մասին նշանավոր օտարերկրացիների վկայությունները ներկայացնող վկայություններն ամփոփող ժողովածուն, որը կազմել եւ հրատարակել է Ալբերտ Իսոյանը, այսպիսով մատչելի է դառնում նաեւ թուրք եւ թուրքերեն ընթերցողներին՝ շնորհիվ թուրքագետ, «Ազգ» օրաթերթի մեկնաբան Հակոբ Չաքրյանի թարգմանության եւ խմբագրման: Գիրքը, ինչպես հայերեն տարբերակի պարագայում, հրատարակության է պատրաստել Արամ Կարապետյանը: (Ի դեպ, հայերեն տարբերակի խմբագիրն էր պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը): «Սեւ գիրքը» լույս է տեսել, ինչպես հայերենի պարագայում, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մեկենասությամբ, «Հայագիտակ» հրատարակչությունից, «Հայրապետ» տպագրատանը, դեղնավուն, ընտիր թղթի վրա, ճաշակավոր, լուրջ կազմով, համապատասխան ինդեքսով: 487 էջ:**

Բորսայի հարթակում՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, իրականացվում է «Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ին պատկանող հետեւյալ օգտագործված ավտոմեքենաների աճուրդային վաճառքը.

1. Գազ 66 ԱԴՁ 21 77, 1989թ.: Մեկնարկային գինը՝ 850000 ՀՀ դրամ:
2. Գազ 5204 986 SL 62, 1987թ.: Մեկնարկային գինը՝ 550000 ՀՀ դրամ:
3. ՌԱՖ 220301 979 UL 62, 1989թ.: Մեկնարկային գինը՝ 75000 ՀՀ դրամ:

Աճուրդները դասական, այնուհետեւ՝ հոլանդական եղանակով՝ մեկնարկային գնի իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Լոտերը կարող են ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվան նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ պատճենը, դիմելով Բորսա՝ վերը նշված հասցե: Այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը:

## Միջազգային գիտաժողովի հրավեր

Սեպտեմբերի 4-ին՝ ժամը 10.00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (Տիգրան Մեծի 17, ՀՊՄՀ ռեկտորատի մասնաշենք, 3-րդ հարկ, գիտաժողովների դահլիճ) կմեկնարկի «Լեզուն, կրթությունը եւ ընտանիքը հայրենադարձության գործընթացում» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես կգան ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ Գագիկ Եգանյանը, Հայաստանում DAAD-ի՝ Ակադեմիական փոխանակումների ծառայության ղեկավար Թինա Լաուֆերը, «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի տնօրեն Վիրջին Արտոն:

Գերմանիայից, Բուլղարիայից եւ Լեհաստանից ժամանած մասնակիցներն իրենց զեկույցներում կանդրադառնան աշխարհի մի շարք երկրներում հայ միգրանտների հայրենադարձության հիմնախնդրին, «Եվրամիության Հայրենադարձության հիմնադրամ»-ի գործունեությանն ու նշանակությանը, «Ռեսեա» կենտրոնի առկա վիճակին ու հեռանկարներին, վերաինտեգրման գործընթացում հայկական Սփյուռքի դերին, Գերմանիայում հայ միգրանտների հայրենադարձության հիմնախնդիրներին եւ այլ թեմաների:

Սիրով հրավիրում ենք մասնակցելու եւ լուսաբանելու գիտաժողովի աշխատանքները:

Մանրամասների համար կարող եք զանգահարել ՀՊՄՀ լրատվության եւ հանրության հետ կապերի վարչություն՝ 597 000 հեռախոսահամարով:

## Վաճառվում է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային:

Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

## Վաճառվում է

Առանձնատուն Էրեբունի թաղամասում, Ռոստովյան փողոց, տուն 48: Ընդ. մակերեսը՝ 132 քմ, բնակելի մակերեսը՝ 86 քմ: Ունի 2 ճակատ 15 մ եւ 9,5 մ: Հարմար է բիզնեսի կազմակերպման համար: Մշտ. ջուր, գազ, ջեռուցում: Վերանորոգված է: Գինը՝ պայմանագրային:

Հեռ. 094-333-009:

## Կորել է

«ԷՄ-ԶԱ» ՍՊԸ արտարժույթի առքուվաճառքի թիվ 772 լիցենզիայի ներդիրը՝ տրված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Համարել անվավեր:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 3.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: